



COUNTERPART INTERNATIONAL



COUNTERPART INTERNATIONAL



Հայաստանի Օրհուս կենտրոններ

Սույն հրատարակությունը հնարավոր է դարձել իրականացնել
 Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան
 ներկայացուցչության կողմից իրականացվող
 Քաղաքացիական հասարակության
 և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի
 և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության
 առարաչեռն աջակցության շնորհիվ՝
 ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության
 գործընկերային պայմանագրի շրջանակներում՝
 «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության
 ՀԿ-ի միջոցով:
 Ձեռնարկի բովանդակությունը, արտահայտված
 տեսակետները և կարծիքները պարկանում են հեղինակներին՝
 «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ին և կազմողներին, և հնարավոր է,
 որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի
 հայաստանյան ներկայացուցչության,
 ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության
 և ԱՄՆ Կառավարության տեսակետներին:

**ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ
 Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ**



«ՂՊԻՐ»

ISBN 978-99930-58-95-3

ԳՅՈՒՄՐԻ - 2013

BUJAN

«Բլեջան» ՀԿ



Հայաստանի
Օրինա կենտրոններ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿ**



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

COUNTERPART
INTERNATIONAL



ԳՅՈՒՄՐԻ

«Դպիր» հրատարակչություն

2013

ՀՏԴ 502.3(07)
ԳՄԴ 20.1 ց7
Ք 162

Կազմողներ՝ **Գևորգ Պեպրոսյան, Լիաննա Ասոյան,
Մարի Չաքրյան, Նվեր Պողոսյան,
Սիրվա Այվազյան, Ժորա Առաքելյան,
Անուշ Էվոյան**

Խորհրդատուներ՝ **Աշոտ Գիլոյան,
Արամ Գաբրիելյան**

Ծրագրի ղեկավար՝ **Լիաննա Ասոյան**

Քաղաքացիական հասարակության բնապահպանական իրազեկու-
թյան ձեռնարկ/«Բլեջան» ՀԿ; Կազմողներ՝ Գ. Պեպրոսյան,
Լ. Ասոյան, Մ. Չաքրյան, Ն. Պողոսյան, Ս. Այվազյան, Ժ. Առաքելյան,
Ա. Էվոյան.-Գյումրի: Դպիր, 2013.-76 էջ:

*Ձեռնարկում ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության ոլոր-
տում քաղաքացիների իրազեկության ու մասնակցության հնարավորություն-
ներն ու մեխանիզմները: Այն տալիս է հանրամատչելի տեղեկատվություն, համա-
պատասխան գիտելիքներ և հմտություններ շրջակա միջավայրի կառավարմանը
մասնակցելու, իրենց իրավունքներն ու պարտականությունները գիտակցելու,
Էկոլոգիական շահերը և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը պաշտ-
պանելու համար:*

*Գրքի հեղինակներ «Բլեջան» ՀԿ-ն և կազմողները այն հասցեագրել են բնա-
պահպանական խնդիրներով զբաղվող կազմակերպություններին, ՏԻՄ-երին և
բոլոր նրանց, ում հետաքրքրում է այդ կարևորագույն ոլորտը:*

ՀՏԴ 502.3(07)
ԳՄԴ 20.1 ց7

ISBN 978-99930-58-95-3

© «Բլեջան» ՀԿ, 2013
© Կազմողներ, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ (*Լիանևուս Ասոյան*).....5

2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՀԱՐՅԵՐԻՆ (*Մարի Չաքրյան, Նվեր Պողոսյան*).....7

2.1. Ինչու՞ է կարևոր իրազեկ լինել շրջակա միջավայրի հարցերին.....7

2.2. Ի՞նչ է բնապահպանական տեղեկատվությունը.....8

2.3. Որտե՞ղից և ինչպե՞ս ստանալ բնապահպանական տեղեկատվություն.....8

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՀԱՐՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ (*Գևորգ Պետրոսյան*).....16

3.1. Որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության իրավունքը.....16

3.2. Ինչու՞ է անհրաժեշտ մասնակցել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին.....17

3.3. Ի՞նչ է հասարակական մասնակցությունը, և ի՞նչ հիմնախնդիրներ կան այդ ոլորտում.....19

3.4. Հասարակության մասնակցության առավելությունները և մասնակցության հիմնական յոթ սկզբունքները.....22

3.5. Հասարակության մասնակցության մակարդակն ու հիմնական ձևերը.....27

3.6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և հասարակության մասնակցությունը այդ գործընթացին.....33

4. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԵՏՊԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՇԱՀԵՐԻ ՊԵՏՊԵՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ (*Գևորգ Պետրոսյան, Մարի Չաքրյան, Ժորա Առաքելյան*).....39

4.1. Հասարակության՝ շրջակա միջավայրի պահպանության իրավունքը.....39

4.2. Հանրության բնապահպանական շահերի պաշտպանություն.....	41
4.3. Հասարակական բնապահպանական մշտադիտարկում (մոնիտորինգ) և վերահսկողություն.....	43
4.4. Արդարադատության մատչելիությունը հանրության բնապահպանական շահերի և իրավունքների խախտման դեպքում.....	45
5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (Սիլվա Այվազյան, Լիաննա Ասոյան, Անուշ Էվոյան).....	49
5.1. ՀՀ-ում բնապահպանական տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրների ցանկ.....	49
5.2. ՀՀ մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին.....	67
5.3. Շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող դրույթներ ՀՀ Սահմանադրությունում.....	69
5.4. Օրիուսի համաձայնագիր.....	70
Օգտագործված աղբյուրների ցանկ.....	74

1. ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր մարդ երագում է ապրել մի այնպիսի փարաձաշոր-ջանում, որտեղ միջավայրը Էկոլոգիապես մաքուր ու անվտանգ է, իսկ իր ընդհանրիքի անդամները՝ Էկոլոգիապես պաշտպանված: Բայց այս ամենը դեռ մնում է որպես հեռավոր մի երագանք, լավագույն ցանկություն, և առկա Էկոլոգիական լարված իրավիճակի համար մենք պարտապար ենք մեղադրել օրենսդիրներին, իշխանություններին, ՏԻՄ-ին, գործարարներին, ՆԿ-ներին, մեր հարևաններին, գրեթե բոլորին, բացի մեզանից:

Իհարկե, անկեղծ ասած, քաղաքացիական մաքսիմալիզմից և սեփական ճշմարտացիության զգացողությունից ելնելով, մենք ոչ միշտ ենք կարողանում անկողմնակալ վերլուծել իրավիճակը և գտնել Էկոլոգիական որևէ հիմնախնդրի իրական պարճառներն ու մեղավորներին: Երբեմն մենք ինքներս ենք դառնում Էկոլոգիական միջավայրի խաթարման կամ իրավախախտման պարճառ՝ ասենք, բազմաբնակարան բնակելի շենքին շար մոտ ավտոբուսակ կառուցելով, սոցիալական վատ վիճակի պարճառով ծառահատում կատարելով կամ պլաստիկ իրեր այրելով, կենցաղային աղբը դրա համար չնախատեսված վայրում թափելով և այլն: Այսինքն՝ մեզանից յուրաքանչյուրի համար շար կարևոր են սեփական ունեցվածքն ու սոցիալական կարիքները, բայց նույնքան խորթ են հանրային ունեցվածքն ու մյուսների սոցիալական կարիքները:

Նավանաբար քչերը գիտեն, որ ըստ ՆՆ Սահմանադրության՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համարեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը» (հոդված 33.2): Այսինքն՝ մեր բոլորի Էկոլոգիապես պաշտպանված լինելու ցանկությունը լիովին օրինական պահանջ է, և մեր կենսամիջավայրի խաթարմանն ուղղված ցանկացած գործունեության հետ կապված՝ մենք պարճապես պարտավոր ենք հանդես գալ մեր բնապահպանական շահերի և իրավունքների պաշտպանությամբ. դա ՆՆ յուրաքանչյուր քաղաքացու սահմանադրական պարտքն է:

Վերջին հաշվով, պետք է հստակ գիտակցել նաև, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ձգտում է ապրել կյանքի համար ապահով և բարենպաստ միջավայրում, բայց շար կարևոր է, թե նա ունի՞ արդյոք համապարասխան գիտելիքներ, պարտապարակա՞ն է արդյոք սեփական օրինա-

կով և մասնակցությամբ նպաստել բարենպաստ կենսամիջավայրի ձևավորմանն ու պահպանմանը:

Ցավոք, արդեն ավելի քան 20 տարի է՝ շրջակա միջավայրի առնչությամբ քաղաքացու իրազեկությունն ու մասնակցությունն ապահովող մեխանիզմները մեր երկրում ձևավորման փուլում են, և այդ գործընթացը չի ընթանում պարզաձև ուղիով: Ուստի անհրաժեշտություն է առաջացել բարձրացնելու հասարակության իրազեկության և ակտիվության մակարդակը, համախմբելու ջանքերը և լոբբինգի ու դրական համագործակցության ձևավորման ճանապարհով նպաստելու երկրում համապատասխան բնապահպանական քաղաքականության և օրենսդրական դաշտի ձևավորմանը:

Ժամանակակից բնապահպանական բարդ իրավիճակում ուղղակի անհրաժեշտություն է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իրազեկ լինի շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, ծանոթ լինի այդ ոլորտում երկրի քաղաքականությանն ու օրենսդրությանը, փիրապետի հանրային մշտադիտարկման (մոնիթորինգի) ու շահերի պաշտպանության հիմնական գործիքներին, կարողանա անհրաժեշտության դեպքում օգտվել դրանցից և, որ առավել կարևոր է, ցանկություն ունենա կիրառելու այդ իմացությունը՝ ի նպաստ իր և այլոց առողջության ու շրջակա միջավայրի պահպանության:

Սույն ձեռնարկը ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում քաղաքացիների իրազեկության ու մասնակցության հնարավորություններն ու մեխանիզմները և նպատակ ունի հնարավոր շահառուներին օգնելու, որ ձեռք բերեն ամենամաքչելի տեղեկատվություն, համապատասխան գիտելիքներ և հմտություններ շրջակա միջավայրի կառավարմանը մասնակցելու, իրենց իրավունքներն ու պարտականությունները գիտակցելու, անհրաժեշտության դեպքում հանրության բնապահպանական շահերը և առողջ ու կյանքի համար բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը պաշտպանելու համար:

2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՅԵՐԻՆ

2.1. Ինչու՞ է կարևոր իրազեկ լինել շրջակա միջավայրի հարցերին

Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ հասարակությունը չուներ տեղեկացված լինելու և որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու այնպիսի իրավունքներ և հնարավորություններ, ինչպիսիք ունի այսօր. մեր երկրում գնալով ավելի ու ավելի շատ քաղաքացիներ են սկսել օգտվել շրջակա միջավայրի հարցերին իրազեկ լինելու իրենց իրավունքից: Ռիոյի՝ դեռ 1992թ.-ին ընդունված հռչակագրի 10-րդ սկզբունքը սահմանում էր, որ էկոլոգիական խնդիրներն առավել արդյունավետ լուծում կարող են ստանալ շահագրգիռ բոլոր քաղաքացիների մասնակցության դեպքում: Այսօր արդեն «քաղաքացիների էկոլոգիական իրավունք» հասկացությունը դարձել է ավելի ընդարձակ ու բազմաբաղադրիչ և անընդհատ զարգանում ու համալրվում է նորանոր գործուն մեխանիզմներով:

Ցանկացած երկրում բնապահպանական օրենսդրությունը արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ քաղաքացուն հասանելի է էկոլոգիական տեղեկատվությունը, և նա ունի շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերին մասնակցելու լիարժեք հնարավորություն:

Չնայած առկա իրողություններին և ոլորտում առկա օրենսդրական բացերին՝ այնուհանդերձ, առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի տեսանկյունից այսօրվա քաղաքացին օրենսդրորեն ավելի պաշտպանված է: Այլ հարց է, թե որքանով է նա ծանոթ այդ իրավունքի իրացման համար իրեն ընձեռված օրենսդրական հնարավորություններին, մեխանիզմներին և որքանով է օգտվում դրանցից:

Այս պայմաններում անհրաժեշտ է բարձրացնել քաղաքացիների իրազեկության մակարդակը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա օրենսդրության վերաբերյալ, ինչպես նաև ծանոթացնել իրազեկության, մասնակցության և հանրային շահերի պաշտպանության ժամանակակից հնարավորություններին և մեխանիզմներին:

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ստացումն առաջին կարևորագույն քայլն է հանրության բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացման, բնապահպանական որոշումների կա-

յացման գործընթացին մասնակցելու և շրջակա միջավայրը պահպանելու հարցերում:

Տեղեկատվության մատչելիությունը մարդու այն հիմնարար իրավունքներից է, որոնք ամրագրված են միջազգային օրենսդրությամբ, ՀՀ Սահմանադրությամբ, առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

2.2. Ի՞նչ է բնապահպանական տեղեկատվությունը

Ըստ Օրինուսի համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի՝ բնապահպանական է համարվում այն տեղեկատվությունը, որը վերաբերում է՝

✓ մեզ շրջապատող միջավայրի բաղադրիչների վիճակին՝ օդ, հող, ջրեր, լանդշաֆտներ, բնական օբյեկտներ, կենսաբազմազանություն և այլն,

✓ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործոններին՝ նյութեր, էներգիա, աղմուկ, ռադիացիա, արդյունաբերություն,

✓ վարչական միջոցներին՝ քաղաքականություն, օրենսդրություն, ծրրագրեր, նախագծեր, էկոլոգիական համաձայնագրեր, ծախսեր և դրանց արդյունքների վերլուծություն, էկոլոգիական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս օգտագործվող տնտեսական վերլուծության այլ տեսակներ,

✓ մարդու առողջ ու անվտանգ կյանքի պայմաններին:

Այդ տեղեկատվությունը կարող է լինել գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ որևէ այլ նյութական ձևով:

2.3. Որպե՞նից և ինչպե՞ս ստանալ բնապահպանական տեղեկատվություն

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ *«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փրկության տեղեկությունը և/կամ դա ստանալու նպատակով, օրենքով սահմանված կարգով, հարցմամբ դիմելու տեղեկատվություն փնտրիչներին և ստանալու այդ տեղեկությունը»:*

Ընդ որում, անձն ունի ոչ միայն տեղեկությանը ծանոթանալու, այլև տվյալ փաստաթղթում առկա տեղեկությունը կամ փաստաթղթի պատճենը ստանալու իրավունք:

Բնապահպանական տեղեկատվության փնտրիչները շրջակա միջավայրի պաշտպանության տարբեր մարմիններն են, որոնք կատարում

են պետական վարչարարական գործառույթներ՝ ունենալով շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում հատակ որոշված պարտականություններ, աշխատանքներ կամ ծառայություններ, իշխանություն չներկայացնող բնապահպանական ցանկացած այլ մարմին, հաստատություններ կամ մասնավոր ընկերություններ են, որոնց վրա դրված է շրջակա միջավայրի բնագավառում պարտականությունների, գործառույթների կամ ծառայությունների մատուցման կատարումը (տեղեկատվությունը տնօրինող կամ շրջակա միջավայրի վրա ազդող գործունեություն իրականացնող ընկերություններ, հատուկ գործակալություններ, լաբորատորիաներ, համալսարաններ և տարբեր պետական ենթակառուցվածքներ, որոնց պետական մարմինները փոխանցել են, օրինակ, հաշվետվություն ներկայացնելու կամ մշտադիտարկում իրականացնելու պարտականություններ):

Այսպիսով, մի շարք պետական մարմիններ պարտավորություն են կրում հավաքելու և պահպանելու իրենց գործունեության հետ կապ ունեցող բնապահպանական տեղեկատվությունը ոչ թե իրենց արխիվի, այլ հասարակությանը հասանելի դարձնելու համար:

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդիկ կարող են տեղեկություն ստանալ՝

- պետական կառավարման մարմիններից,
- տեղական ինքնակառավարման մարմիններից,
- պետական հիմնարկներից,
- պետական և տեղական բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից,
- հանրային նշանակության կազմակերպություններից,
- պաշտոնատար անձանցից:

Բնապահպանական տեղեկատվությունը պահվում է նաև այլ մարմիններում, հաստատություններում կամ մասնավոր ընկերություններում, որոնց գործունեության բնույթը շրջակա միջավայրի պահպանությունը չէ, բայց նրանք ունեն շրջակա միջավայրի վրա ազդող կամ ազդելու հնարավորություն ունեցող գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, նրանց վրա դրված են վարչական պարտականություններ և գործառույթներ, կամ նրանք մատուցում են շրջակա միջավայրին վերաբերող ծառայություններ:

Յուրաքանչյուր կազմակերպությունում տեղեկություն տալու պարտավորությունը դրված է տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վրա, որն էլ պարտավոր է ժամանակին պատասխանել տեղեկություն ստանալու հարցումներին:

Առևտրային կազմակերպությունների տեղեկատվությունը

Պետական հաստատությունները պետք է ապահովեն օպերատորների կողմից գրանցման և հաշվառման իրականացումը, մթնոլորտ և ջրային օբյեկտներ, ինչպես նաև ստորգետնյա ջրեր և հողեր արտանետվող նյութերի կանոնավոր ուսումնասիրությունները, թափոնների տեղափոխման և պահպանման, ինչպես նաև վթարային իրավիճակների մասին տեղեկատվությունը: Չնայած պետության օրենսդրությամբ նման պահանջներ կարող են և չներկայացվել, այնուամենայնիվ պետությունը պետք է պարտավորեցնի ձեռնարկություններին կանոնավոր կերպով տեղեկատվություն ներկայացնել տեղի բնակչությանը և հասարակության լայն շրջանակներին արտադրության արդյունքում արտանետվող նյութերի մասին:

Տեղեկատվության ակտիվ և պասիվ տարածումը

Ըստ Օրհուսի կոնվենցիայի՝ գոյություն ունի տեղեկատվության տարածման երկու ձև՝

- պասիվ տարածում, ինչը նշանակում է տեղեկատվության տրամադրում՝ ի պատասխան հարցմանը. այսինքն՝ պետական մարմինը տրամադրում է միայն այն տեղեկատվությունը, որը պահանջել է հասարակության ներկայացուցիչը,

- ակտիվ տարածում, որն իրականացվում է այն դեպքում, երբ պետական մարմինը, կատարելով իր պարտականությունները, ինքնուրույն տարածում է որոշակի տեղեկատվություն:

Բնապահպանական տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է կազմել տեղեկատվական հարցում, որը

- նախընտրելի է ներկայացնել գրավոր,
- ձևակերպել հստակ, որ հնարավոր լինի հեշտությամբ հասկանալ,
- հարցվող տեղեկատվությունը նկարագրել մանրակրկիտ,
- տեղեկատվության մատչելիության վերաբերյալ հղումներ կատարել ազգային օրենսդրությանը:

Տեղեկատվություն ստանալու հարցումը հասարակության ներկայացուցչի ցանկացած դիմումն է՝ բանավոր (հեռախոսով կամ անձնական հանդիպման ժամանակ) կամ գրավոր (նամակ, ֆաքս, էլ. փոստ)՝ ուղղված պետական մարմնին տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Յուրաքանչյուր մարդ, անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակվելու վայրից, տարիքից և սեռից, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունք ունի:

Տեղեկատվության մատչելիության սկզբունքները

Մատչելի է այն տեղեկատվությունը, որի վրա չի տարածվում գաղտնիության վերաբերյալ դրույթների ազդեցությունը: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի առանց դրանում շահագրգռվածության պատճառների բացահայտման և այն ձևով, որով պահանջվում է: Պետական մարմինները պետք է ապահովեն տեղեկատվական հարցման հասցեագրումը այն մարմիններին, որոնց դա անմիջականորեն վերաբերում է:

Տեղեկատվության տրամադրման ժամկետները

Ըստ Օրհուսի կոնվենցիայի՝ տեղեկատվությունը պետք է տրամադրվի հնարավորինս կարճ ժամկետներում՝ ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում (ժամկետի երկարացման հնարավորություն՝ ևս 1 ամիս): Եթե տեղեկատվությունը հնարավոր չէ տրամադրել նշված ժամկետում, ապա այդ մասին անհրաժեշտ է տեղեկացնել հարցում ներկայացնողին:

Մերժման չեղերը և տեղեկատվության դիմաց վճարը

Հարցման մերժումը պետք է ներկայացվի գրավոր՝ նշելով մերժման հիմքերը: Եթե գաղտնի տեղեկատվության մեջ կան շրջակա միջավայրին վերաբերող տարրեր, դրանք պետք է առանձնացվեն և ներկայացվեն հասարակությանը. բնապահպանական տեղեկատվություն տրամադրելու համար հնարավոր է որոշակի վարձավճարի գանձում:

Մերժման հիմքերը կարող են լինել երկու տեսակի՝

ա. կան պայմաններ, որոնք զրկում են պետական մարմին տեղեկատվություն տրամադրելու հնարավորությունից,

բ. կան շահեր, որոնք կարող են վնասվել տեղեկատվություն տրամադրելու արդյունքում:

Մերժումը հիմնավորելու համար անհրաժեշտ է հստակ ընթացակարգի, կանոնների ու հղումների առկայություն: Ամեն դեպքում պետական մարմինները պարտավոր են տրամադրել իրավաբանական խորհրդրդատվություններ և աջակցել հասարակությանը:

Մերժման պատճառ կարող են հանդիսանալ այն պայմանները, որոնք պետական մարմնին թույլ չեն տալիս պատասխանել հասարակությանը, օրինակ՝

- պետական մարմինը չունի նման տեղեկատվություն,
- հարցումն ակնհայտ անհիմն է կամ ձևակերպված է շատ ընդհանուր ձևով,
- նյութը գտնվում է պատրաստման ավարտական փուլում,
- հարցումը կապված է պետական մարմինների ներքին շրջանառու-

յան փաստաթղթերի հետ (նիստերի արձանագրություններ, մեկ մարմնի ներքին նամակագրություն, նամակագրություն նախարարության աշխատակիցների միջև):

Սերժան հիմք կարող են հանդիսանալ շահերը, որոնք կարող են վրձնավել տեղեկատվության հրապարակման արդյունքում. տեղեկատվության տրամադրումը կարող է բացասականորեն ազդել մեկ այլ անձի շահերի վրա: Այս դեպքում էլ, սակայն, անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք հասարակական շահերը չեն գերակշռում մասնավոր շահերը:

Հաշվի են առնվում՝

- ❖ ներքին գործավարության գաղտնիությունը,
- ❖ միջազգային հարաբերությունները,
- ❖ ազգային անվտանգությունը, հասարակական անվտանգությունը (անհրաժեշտ են դասակարգման հստակ չափանիշներ),
- ❖ տեղեկատվության օգտագործումը արդարադատության մարմինների կողմից (գործի քննություն),
- ❖ առևտրային կամ արդյունաբերական գաղտնիքը (պետք է կարգավորվի օրենքով. խոսքը է օրինականացված տնտեսական շահերի, այլ ոչ թե, օրինակ, արտանետումների մասին է),
- ❖ մտավոր սեփականության իրավունքը (կիրառելի չէ այն նախագծային փաստաթղթերի կամ տվյալների նկատմամբ, որոնք ֆինանսավորվում են պետության հաշվին),
- ❖ անձնական տվյալները (կիրառելի չէ իրավաբանական անձանց համար),
- ❖ երրորդ կողմի շահերը (օրինակ՝ կամավոր տրամադրվող տեղեկատվություն),
- ❖ հազվագյուտ տեսակների մասին տեղեկատվությունը (օրինակ՝ դրանց պաշտպանությունը):

Օրենսդրության համաձայն՝ գաղտնի չեն կարող համարվել շրջակա միջավայրի մասին տեղեկատվությունը, շրջակա միջավայր արտանետումների մասին տեղեկատվությունը, բնակչության, շրջակա միջավայրի, աշխատատեղի և բնակավայրի վիճակի մասին տեղեկատվությունը, մարդու կյանքի և առողջության համար վտանգ պարունակող տեղեկատվությունը, արդեն կատարված կամ սպասվող արտակարգ իրավիճակների, աղետների մասին տեղեկատվությունը, որոնք վտանգում են կամ կարող են վտանգել բնակչության առողջությունը:

Ինչպես շնակերպել լավ հարցում տեղեկատվություն արանալու համար.

✓ քննապահպանական տեղեկատվություն ստանալու հարցումը ցանկալի է ներկայացնել գրավոր,

✓ գրության մեջ անպայման պետք է նշել, որ դա տեղեկատվություն ստանալու հարցում է, ամսաթիվը, գրության համարը, և ով է կատարում հարցումը (կազմակերպություն, անհատ),

✓ եթե հարցումը կատարում է կազմակերպությունը, ցանկալի է, որ այն գրվի պաշտոնական ձևաթղթի վրա, ստորագրվի ղեկավարներից մեկի կողմից և կնիքվի,

✓ հարցման սկզբում անպայման պետք է հղում կատարել երկրի օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությանը, այն օրենքներին և հատկապես դրանց այն հոդվածներին ու կետերին, որոնք սահմանում են տեղեկատվություն ստանալու իրավունքը,

✓ դա անհրաժեշտ է, որպեսզի պաշտոնյաներին մեկ անգամ ևս հիշեցնեք ձեր իրավունքների և տեղեկատվություն տրամադրելու նրանց պարտականությունների մասին,

✓ պետք է հստակ ձևակերպել, թե ինչ տեղեկություններ եք ուզում ստանալ, հարկավոր է նշել, թե կոնկրետ որ ժամանակահատվածին է վերաբերում այն. դա կօգնի հեշտությամբ գտնել և ձեզ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը,

✓ կատարե՞ք հարցում միայն իսկապես անհրաժեշտ տեղեկատվության մասին. մի հարցումով հնարավոր չէ տեղեկություններ ստանալ ամեն ինչի մասին,

✓ հարցման վերջում անպայման պետք է նշել, որ դուք պատրաստ եք տեղեկատվության պատճենահանման համար վճարել կամ տրամադրել որևէ կրիչ էլեկտրոնային տարբերակով այն ստանալու համար:

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի նմուշ

Մարմնի, կազմակերպության անվանումը
Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն-ազգանունը
Դիմողի անուն-ազգանունը, հայրանունը
Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն

Տեղեկություն ստանալու հարցում

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները Օր-
հուսի՝ ՀՀ կողմից վավերացված համաձայնագրի և «Տեղեկատվության ազա-
տության մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ խնդրում եմ ինձ տրամադրել տե-
ղեկություններ ----- (*հնարավորինս հստակ
չեփանքապես անհրաժեշտ տեղեկատվությունը*) -----
----- մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
պահանջների համաձայն՝ խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամ-
բողջությամբ և 5-օրյա ժամկետում, քանի որ խնդրվող տեղեկատվությունը
չի պահանջում լրացուցիչ աշխատանք:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրա-
վոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (հոդված 11):

Կազմակերպությունը պատրաստ է տեղեկության պատճենահանման
յուրաքանչյուր էջի համար վճարել 10 դրամ կամ տրամադրել որևէ կրիչ
էլեկտրոնային տարբերակով տեղեկությունը ստանալու համար:

- Կանխավ շնորհակալություն:
- Անուն-ազգանուն
- Ստորագրություն
- Ամսաթիվ

(Այս չեր պատրաստվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» մշակած նմուշի հիման վրա):

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցումը մերժելու կամ ոչ բավարար պատասխանի դեպքում կարելի է բողոքարկել:

Օրենսդրությամբ սահմանվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության երեք հիմնական ձև՝

- վերանայում վերադասության կարգով,

- բողոքարկում մարդու իրավունքների պաշտպանին,
- բողոքարկում դատական կարգով:

Տեղեկություն ստանալու մերժումը կարելի է բողոքարկել խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, քաղաքացին, որպես հաջորդ քայլ, կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանին կամ ուղղակի դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարելի է դիմել նաև առանց վերադասության կարգով բողոքարկելու:

Կարելի է նաև դիմել այն հասարակական կազմակերպություններին, որոնք տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն:

Եթե տեղեկություն ստանալու հարցմանը տրված պատասխանը բավարար չէ, դիմողը կարող է այն բողոքարկել վերևում նշված կարգով:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

3.1. Որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության իրավունքը

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սակայն գործնականում այսօր առկա մեխանիզմները չեն ապահովում այդ մասնակցությունը, և բնակչության համար կենսականորեն կարևոր որոշումները, նույնիսկ եթե օրենքով դրանց համար նախատեսված են հանրային լսումներ, չեն ընդունվում մասնակցային ընթացակարգով՝ հետագայում հանգեցնելով բնական պաշարների գերշահագործման, շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտման, սոցիալական անարդարության և երբեմն՝ բախումների: Բացի դրանից, ՀՀ-ի կողմից 2010թ.-ին ստորագրվել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին լրացուցիչ արձանագրությունը, որի համաձայն՝ երկրները պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

Որպեսզի հասարակական մասնակցությունը իմաստային և բովանդակային առումով Հայաստանի Հանրապետությունում իսկապես դառնա իրականանալի, պետք է այն ընկալել որպես մարդու իրավունքների մի առանձին կարևորագույն ոլորտ և կատարել հետևյալ սկզբունքային փոփոխությունները.

- ✓ վերանայել որոշումների ընդունման գործընթացներին հասարակության մասնակցության մեխանիզմները՝ սահմանելով համապատասխան ընթացակարգեր և ապահովելով շահագրգիռ հասարակայնության իրական մասնակցությունը այդ գործընթացին,

- ✓ սահմանել պատասխանատվության մեխանիզմներ՝ առանց հասարակայնության ներգրավման որոշումներ ընդունելու դեպքերում կամ խստացնել արդեն գոյություն ունեցողները,

- ✓ կատարելագործել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգը, օրենքով ամրագրել անկախ հասարակա-

կան փորձաքննություն իրականացնելու հնարավորությունը,

✓ իրավական փաստաթղթերով երաշխավորել ազդակիր համայնքի դիրքորոշման որոշիչ լինելը:

3.2. Ինչու՞ է անհրաժեշտ մասնակցել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին

Իսկապես, հաճախ հարց է առաջանում՝ ինչու՞ է անհրաժեշտ հասարակական մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում, և ինչու՞ չի կարելի այդ հարցերի լուծումը թողնել միայն փորձագետներին. չէ՞ որ նրանք ավելի լավ են տիրապետում հիմնախնդիրների էությանը, քան հասարակության մնացած անդամները:

Ոլորտային շատ պաշտոնյաներ և բնօգտագործման վրա հիմնված քիզնետով զբաղվող շատ գործարարներ կարծում են, որ հասարակական մասնակցությունը ընդամենը եվրոպական տարբեր համաձայնագրերի պահանջների արդյունքում առաջացած ձևական մի բան է: Ըստ նրանց՝ հասարակության մասնակցությունը անիմաստ գործընթաց է, որը պահանջում է վատնել ահագին ժամանակ ու ջանքեր՝ չհաշված քննարկումների ընթացքում առաջացած մյուս գլխացավանքները:

Որպես հասարակության անդամ՝ այս հարցին պետք է նայել այլ տեսանկյունից. շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ որոշումները ու՞մ կենսապայմանների և առողջական վիճակի վրա կունենան էական բացասական ազդեցություն: Դե, իհարկե, այն մարդկանց վրա, ովքեր ապրում են տվյալ որոշման ազդեցության գոտում, իսկ ավելի իրավական ձևակերպումներով՝ շահագրգիռ հասարակության կամ համայնքի: Հետևաբար, եթե կայացվելու է շրջակա միջավայրի վերաբերյալ որոշում, որի արդյունքում փոփոխությունների է ենթարկվելու մարդկանց կենսամիջավայրը, ու դա կարող է նրանց կենսապայմանների և առողջության վրա բացասական ազդեցություն ունենալ, ապա այդ մարդկանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին պարզապես դառնում է անհրաժեշտություն ցանկացած ժողովրդավարական կոչվող երկրում:

Այստեղ առաջանում է մյուս հարցը. ի՞նչ է, բնապահպանության ոլորտի փորձագետները, գործարարները և որոշում կայացնող պաշտոնյաները այս հասարակության անդամներ չե՞ն կամ մեր ժողովրդի թշնամիներ՞ն են: Սա շատ կարևոր ու նուրբ հարց է և հաճախ է արծարծվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքների ներ-

կայացման հանրային քննարկումների ժամանակ: Իհարկե, թե՛ որոշում կայացնող պաշտոնյաները, թե՛ գործարարները և թե՛ առավել ևս փորձագետները այս հասարակության թշնամիները չեն, բայց նրանց տեսակետներին ու կարծիքներին պետք է նայել իրենց ունեցած շահերի և երկրում առկա կառավարման իրողությունների տեսանկյունից:

Պետական պաշտոնյաներն այս առումով ամենախոցելիներն են, որովհետև նրանք այսօրվա կառավարման համակարգում պարզապես անվերապահորեն ղեկավարվում են վերադասների կողմից՝ չհաշված այս կամ այն պաշտոնյայի կուսակցական պատկանելությունը, ազգակցախնամիական կապերը և կոռուպցիոն ռիսկերը: Հետևաբար, պաշտոնյաների հավաստիացումներին, թե տվյալ գործունեությունը շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն չի ունենա, իրենք էլ են այս երկրում ապրում, հո իրենք իրենց թշնամին չեն, հո չեն թունավորի իրենց երեխաներին և այլն, հանգիստ խղճով կարելի է չհավատալ, ես կասեի, բանի տեղ չդնել:

Գործարարները այս գործընթացներում ամենաշահագրգիռ մարդիկ են, ովքեր ֆինանսական ներդրումներ են անելու և շահույթ են ստանալու: Նրանք, իրենց բիզնեսի շահերից ելնելով, հաճախ են մեզ համոզում, թե այդ որ արտադրությունն է անվնաս, մեզ համար աշխատատեղեր են ստեղծում, սոցիալական խնդիրներ են լուծում, ի՞նչ բնապահպանության ժամանակն է, բա երկրի տնտեսությունը չզարգանա՞ և այլն: Հետևաբար բնօգտագործման վրա հիմնված բիզնեսով զբաղվող գործարարների հավաստիացումներին նույնպես պետք է շատ վերապահումներով մոտենալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) իրականացնող փորձագետները սովորաբար աշխատում են պետական համակարգում կամ վարձվում են գործարարների կողմից: Պետական համակարգում ՇՄԱԳ իրականացնող փորձագետների կարծիքի վրա ազդելը շատ հեշտ գործ է. վերադասի հրաման կա, աշխատանքից հեռացվել կա, տուն պահել կա, ընկերություն-բարեկամություն կա, կոռուպցիոն տարբեր ռիսկեր կան և այլն: Գործարարի կողմից վարձվող փորձագետի նպատակը էն գլխից պարզ է. ամեն կերպ հիմնավորել նախատեսվող գործունեության դրական կողմերը՝ նվազեցնելով և թաքցնելով բացասականները, այսինքն՝ տրամաբանական է, որ գործարարը պետք է այնպիսի փորձագետ վարձի, որն ամեն ձևով կձառայի իր շահերին:

Հետևաբար, ՇՄԱԳ իրականացնող փորձագետների կարծիքին էլ պետք չէ շատ լուրջ վերաբերվել, նրանք հաճախ մեզ համոզում են, որ իրենք ավելի լավ գիտեն, ողջ կյանքում դրա ուսումնասիրությամբ են զբաղվել, որ նույնիսկ զարգացած երկրներում է այդպես, նորագույն տեխնոլոգիաներ են կիրառվելու, արտանետումները շատ չնչին են, հետազոտությունների տվյալ-

ներն ու նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդկանց առողջությանը վնաս չէ, ամեն ինչ համապատասխանում է նորմերին ու ստանդարտներին և այլն:

Միայն շահագրգիռ հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործին կարող է ապահովել թափանցիկ գործընթաց և բացահայտել նախատեսվող գործունեության արդյունքում կենսամիջավայրի վրա հնարավոր ազդեցության հետևանքները: Հույսներս պետք է դնենք մեզ վրա, քանի որ Հայաստանում չկա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հասարակական այլընտրանքային փորձաքննական համակարգ: Պետք է փորձել ձևավորել այդ այլընտրանքային փորձաքննական համակարգը, նաև կրթել ու աճեցնել ոլորտի հասարակական փորձագետներ:

Միայն շրջակա միջավայրի հարցերի քննարկումներին մեր շահագրգիռ մասնակցությունը կարող է հանգեցնել վնասակար գործունեության դադարեցման կամ խնդրի նոր այլընտրանքային լուծումների: Միայն մեր մասնակցությունը կարող է հանգեցնել այն բանին, որ բոլորը սկսեն գիտակցել, որ այդ միջավայրը իրենցն է, վստահ լինեն, որ այդ գործունեությունը չի թունավորի իրենց երեխաների կյանքը, պետական պաշտոնյան, գործարարն ու փորձագետը գիտակցեն, որ քաղաքացիական հասարակությունն իրենց վերահսկում է, և ցանկացած խախտման համար իրենք պատասխան են տալու յուրաքանչյուրիս:

3.3. Ի՞նչ է հասարակական մասնակցությունը, և ի՞նչ հիմնահանդիրներ կան այդ ոլորտում

Արդեն մենք համոզվեցինք, որ որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությունը այն կարևորագույն գործոններից մեկն է, որը նպաստում է հանրության իրավասության շրջանակների ընդլայնմանը, մոտիվացիայի և համագործակցության զգացողության ձևավորմանը, փոխվստահության և հանգամանքների վրա ազդելու հնարավորության աճին: Քաղաքացիական մասնակցությունը հասարակական շահերի պաշտպանության գործընթացի կարևորագույն նախապայմանն է և մարդու իրավունքների անբաժանելի մասը:

Հասարակության մասնակցությունը մի գործընթաց է, որի շնորհիվ որոշակի խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում առանձին մարդկանց կամ բնակչության խմբերի հայացքները, դիրքորոշումը և կարծիքները:

Հասարակության մասնակցությունը հնարավորություն է ընձեռում ներգործել բնապահպանական կարևորություն ունեցող որոշումների ընդունման վրա՝ ստանալով տեղեկատվություն այն խնդիրների մասին, որոնք կարող են ազդել բնակչության առողջության և կենսապայմանների վրա: Դրանով հասարակական մասնակցությունը քաղաքացիների մեջ ձևավորում է սոցիալական պատասխանատվության գգացում: Հասարակայնության ներգրավումը նախագծերի նախապատրաստման, մասնագիտական քըննարկումների և բուն իրագործման մեջ, նպաստում է հասարակության՝ պետական կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների նրկատմամբ հավատի և վստահության աճին, փոխադարձ վստահության և դրական համագործակցության մթնոլորտի ձևավորմանը:

Ալնհայտ է, որ Հայաստանում և մասնավորապես փոքր համայնքներում հասարակական մասնակցություն գրեթե չկա կամ կրում է ձևական բնույթ:

Քաղաքային համայնքներում, որտեղ կան քաղաքացիական հասարակության քիչ թե շատ զարգացած կառույցներ, ձևավորված են տեղական համագործակցության կոալիցիաներ, ցանցեր և նախաձեռնություններ, որոնք ներգրավում են սկստիվ քաղաքացիների, երիտասարդների, ՀԿ ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների. հասարակական մասնակցությունը՝ որպես այդպիսին, գոյություն ունի, բայց երկրի կառավարման համակարգում առկա իրողությունները և իրավական դաշտում առկա բացերը հնարավորություն չեն տալիս, որ շրջակա միջավայրի կառավարման հարցերի շուրջ կայացվող որոշումների վրա այդ մասնակցությունը ունենա էական ազդեցություն: Մեր հասարակության մեջ դեռևս գոյություն չունի հստակ ձևավորված պատկերացում հասարակական մասնակցության վերաբերյալ, կառավարման ոչ մի մակարդակում չկա իշխանությունների հետ հարաբերություններ կառուցելու և իսկապես հասարակական մասնակցություն ապահովելու ավանդույթ: Հասարակության մեջ նոր է սկսել ձևավորվել շրջակա միջավայրի համար անբարենպաստ որոշումների հանդեպ հանրային կարծիքի ձևավորման և որոշակի վերաբերմունք դրսևորելու պահանջարկ, և, ամենակարևորը, հասարակությունը շրջակա միջավայրի պահպանության հարցերում դեռ նոր է սկսել հանդես գալ պահանջատիրոջ դիրքերից:

Այսօր Հայաստանում մեծագույն խնդիր է շրջակա միջավայրի առընչությամբ որոշումների կայացման գործընթացից գրեթե օտարված հասարակությանը մասնակցության մղելը և համապատասխան հանրային կարծիք ձևավորելը, մանավանդ համայնքային մակարդակում և հատկապես համեմատաբար փոքր համայնքների պարագայում: Ավելին, երբեմն

համայնքի ակտիվ անհատների կամ ՔՀԿ ներկայացուցիչների՝ հանրային լուսմներին մասնակցելու, փաստաթղթերին ծանոթանալու, կարծիք արտահայտելու, որոշումներին համաձայն չլինելու, այլընտրանքային տարբերակներ առաջարկելու ցանկությունն ու փորձերը տեղական իշխանությունների կողմից դիտվում են որպես ընդդիմադիր կեցվածք ու դիմադրություն իրենց գործունեությանը:

Բնապահպանական ոլորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մեկ տասնյակից ավել միջազգային համաձայնագրերով, ՀՀ Սահմանադրությամբ, շրջակա միջավայրի ոլորտային տարբեր օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված է հանրության պարտադիր մասնակցություն կառավարման տարբեր մակարդակներում որոշումների մշակման, քննարկման, ընդունման, իրականացման և վերահսկման գործընթացներին: Սակայն համապատասխան ընթացակարգերի և գործուն մեխանիզմների բացակայության պատճառով շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցությունը, մեղմ ասած, այսօր ՀՀ-ում պարզապես կրում է ձևական բնույթ: Շատ համայնքներում հասարակական մասնակցությունը և հանրության բնապահպանական շահերի պաշտպանությունը լավագույն դեպքում սկսվում և ավարտվում են միայն դրանց մասին խոսելով:

Նախ՝ իրավասու մարմինների կողմից չի կատարվում հանրության պատշաճ իրազեկում նախատեսվող գործունեության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լուսմների մասին, ինչը հնարավորություն կտար հասարակությանը ցանկության դեպքում մասնակցել որոշումների կայացման գործընթացին: Բացի այդ, լուրջ աշխատանք է անհրաժեշտ իրականացնել, որպեսզի սովորական քաղաքացիների խումբը վերածվի իսկապես շահագրգիռ հասարակության և պատշաճ մասնակցություն ապահովի որոշումների կայացման գործընթացին: Ստացվում է այնպես, որ հասարակության իրազեկության և իրավագիտակցության ցածր մակարդակը, բնապահպանական հիմնախնդիրները և դրանց բացասական ազդեցությունը լավ չպատկերացնելը հանգեցնում են որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության պասիվության:

ՀՀ օրենսդրությունում հստակ սահմանված չեն բնապահպանական որոշումների կայացման գործընթացին հասարակական մասնակցության մեխանիզմները, նույնիսկ մինչև օրս գոյություն չունի հասարակական լրսման՝ օրենքով սահմանված ընթացակարգ:

Հասարակության մասնակցությունը խոչընդոտող մյուս կարևոր հանգամանքն այն է, որ քաղաքացիները վստահ չեն, որ իրենց մասնակցությամբ

կարող են դադարեցնել կամ փոխել այն ապօրինի ծրագրերի ընթացքը, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և իրենց առողջության վրա: Երբեմն հասարակական մասնակցությունը, եթե մասնակցողները իրագել և նախապատրաստված չեն, նույնիսկ կարող է նպաստել նախատեսվող ապօրինի գործունեությունների օրինականացմանը և ոչ մի էական ազդեցություն չունենալ վերջնական որոշման վրա:

3.4. Հասարակության մասնակցության առավելությունները և մասնակցության հիմնական յոթ սկզբունքները

Շրջակա միջավայրի պաշտպանությունն իրենից ներկայացնում է կառավարական մարմինների, հասարակության և գործարարների համաձայնեցված գործողություններ պահանջող փոխազդեցության գործընթաց, որում շատ կարևոր դեր ունի հասարակական կամ, այսպես կոչված, քաղաքացիական մասնակցությունը: Հասարակայնության ներգրավումը որոշումների կայացման գործընթացի մեջ կարող է օգուտ բերել այդ խմբերից յուրաքանչյուրին՝ առանձին վերցրած, և երկրում ժողովրդավարության զարգացմանը՝ ընդհանուր առմամբ:

Հասարակայնության մասնակցության հայեցակարգը հիմնվում է երկու էական սկզբունքների վրա.

✓ *յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի մասնակցելու այն հիմնական որոշումների մշակման և կայացման գործընթացներին, որոնք կարող են ուղղակիորեն ազդել շրջակա միջավայրի և իր կյանքի որակի վրա,*

✓ *միայն շահագրգիռ հասարակայնության ակտիվ ներգրավման և մասնակցության արդյունքում կարող է բարձրանալ շրջակա միջավայրի առնչությամբ կայացվող որոշումների որակը:*

Հասարակայնության մասնակցությունը ստեղծում է առավել հիմնավորված և ճիշտ որոշումների կայացման հնարավորություն, այսինքն՝ այնպիսի որոշումների, որոնք բավարարում են մեծամասնության պահանջ-մունքները, ունեն գործողության ավելի երկարատև ժամկետ, կենսունակություն և տանում են հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքի որակի բարելավման:

Որոշումների կայացման գործընթացում հասարակական մասնակցությունը այն հիմնական գործոններից մեկն է, որը նպաստում է քաղաքացիների իրավասության շրջանակների ընդլայնմանը, մտփվացիայի և համագործակցության զգացողության ձևավորմանը, վստահության և հանգա-

մանքների վրա ազդելու հնարավորության աճին: Միայն հասարակության մասնակցության շնորհիվ է, որ հանրության բնապահպանական շահերի պաշտպանությունը ձեռք է բերում ձև և իմաստ:

Քաղաքացիական մասնակցությունը հասարակական շահերի պաշտպանության գործընթացին կարևորագույն նախապայման է և մարդու իրավունքների անբաժանելի մասն է:

Մասնակցության ձևը և աստիճանը շահերի պաշտպանության գործընթացի տարբեր փուլերում կարող են խիստ տարբերվել միմյանցից:

Կան փուլեր, որտեղ պետք է այդ մասնակցությունը լինի համընդհանուր, որպեսզի թողնի անհրաժեշտ ազդեցություն, իսկ կան փուլեր, որտեղ շատերի մասնակցությունը դժվար է և կատարվում է միջնորդավորված ձևով:

Քաղաքացիական մասնակցությունը ընդլայնում է իրավասությունը միայն այն ժամանակ, երբ շահերի պաշտպանության գործընթացի մասնակիցները կատարում են իրենց ընտրությունը և ընդունում են որոշում:

Նույնիսկ եթե հասարակայնությունը համաձայն չէ կայացված վերջնական որոշմանը, բայց քանի որ ակտիվորեն ներգրավված է եղել որոշումների կայացման գործընթացին, ապա ավելի ըմբռնումով կվերաբերվի այդ որոշմանը, քան այն դեպքում, եթե տվյալ որոշումը կայացվել է հասարակության անտեղյակության պայմաններում:

Որոշում կայացնող մարմինների և շահագրգիռ հասարակայնության միջև ձևավորվող փոխհարաբերությունները ուղղակիորեն կախված են հասարակայնության ներգրավման մեխանիզմներից և մասնակցության արդյունավետությունից:

Ի՞նչ առավելություններ է տալիս հասարակայնության մասնակցությունը.

➤ հասարակության անդամները հասկանում են, թե ինչ է կատարվում իրենց շուրջը, ավելի իրազեկ են լինում կոնկրետ նախագծերին, գիտակցում են շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունները և, հետևաբար, կարողանում են դրանց վերաբերյալ ունենալ կոնկրետ դիրքորոշումներ աջակցել դրանց կամ բոյկոտել դրանց իրականացումը, հետևել կառավարման ընթացքին, իրականացնել մշտադիտարկում և հասարակական վերահսկողություն,

➤ մասնակցության դեպքում հավանականությունը մեծ է, որ հասարակության կարծիքը ուշադրության կարժանանա և որոշակի դրական ազդեցություն կունենա վերջնական որոշման վրա,

➤ մասնակցությունը հնարավորություն է ստեղծում հաշվի առնել տեղական պայմանների առանձնահատկությունները, տեղի բնակիչների կար-

ծիրը և բացահայտել նախագծի հնարավոր թերությունները,

➤ քննարկումների ընթացքում կարող են վեր հանվել շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար դեռևս չբացահայտված հնարավոր ռիսկեր և նվազեցվել նախատեսվող նախագծի բացասական ազդեցությունները,

➤ հասարակությունը տեղյակ կլինի, թե ով է որոշումներ կայացնում, ինչի հիման վրա են դրանք կայացվում, և որքանով է այդ գործընթացում հաշվի առնվում իր կարծիքը,

➤ մասնակցությունը հնարավորություն է ստեղծում ձևավորել երկխոսության մշակույթ ու որոշակի համագործակցային մթնոլորտ որոշում կայացնող մարմինների, հասարակության և գործարար կառույցների միջև, ինչպես նաև նվազեցնել հնարավոր լարվածության, բախումների կամ անցանկալի գործողությունների հավանականությունը,

➤ մասնակցությունը հնարավորություն է ստեղծում ձևավորելու հուսալի հարաբերություններ և փոխադարձ վերահսկողություն տեղական իշխանությունների, գործարարների, հասարակության և ՋԼՄ-ների միջև,

➤ որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցությունը յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս իրեն զգալ հասարակության լիարժեք անդամ և զարգացնել հասարակության հանդեպ իր պատասխանատվության զգացումը:

Հասարակայնության մասնակցության հիմնական յոթ սկզբունքները

1. Հասարակայնությունը պեպք է ներգրավվի որոշումների կայացման վաղ փուլերում, երբ առկա է կայացվելիք որոշման վրա ազդեցություն գործելու հնարավորությունը: Հասարակայնության մասնակցությունը կարելի է որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում՝ մշակումից մինչև իրականացում, բայց առանձնապես կարևոր է վաղ փուլում: Սա նըշանակում է, որ հասարակությունը իրավունք ունի մասնակցելու գործընթացին այն ժամանակ, երբ դեռ ոչ մի որոշում չի կայացվել, գործունեություն չի ծավալվել, և առկա է խնդրի լուծման յուրաքանչյուր տարբերակի քննարկման, ընտրության և որոշման վրա ազդելու հնարավորությունը: Այս սկզբունքի ապահովումը հասարակայնության մասնակցության տրամաբանական հիմքն է և ժողովրդավարության կարևորագույն երաշխիքներից մեկը:

2. Մասնակցության համար պեպք է սահմանվեն ողջամիտ ժամկետներ՝ հաշվի առնելով այն ժամանակը, որն անհրաժեշտ է, որ հասարակությունն ընկալի բազային տեղեկատվությունը, լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար հնարավորություն ունենա դիմելու համապատաս-

խան մարմիններին, կարողանա քննարկել և վերլուծել առկա տեղեկատվությունը և նախապատրաստվել լուծումներին կամ քննարկումներին: Միայն ողջամիտ ժամկետների և համապատասխան ընթացակարգերի դեպքում կարող է խոսք լինել հասարակայնության արդյունավետ մասնակցության մասին:

3. *Մասնակցության հնարավորության մասին պիտի ապահովվի հանրության պաշտան իրազեկումը.*

Գոյություն ունեն հասարակայնության իրազեկման երկու պաշտոնական մեթոդներ՝ հասարակական ծանուցում և անհատական ծանուցում:

Ծանուցումը պիտի կազմված լինի պաշտան կերպով և պիտի

- պարունակի մասնակցության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը,
- հասցեատերերին ներկայացվի օրենքով սահմանված ժամկետներում,
- ուղղված լինի ճիշտ հասցեատերերին՝ ազդակիր համայնքներին, շահագրգիռ հասարակայնությանը:

Հասարակայնության իրազեկման առավել տարածված ձևերից են՝

- հայտարարության հրապարակումը հանրապետական մշակակության որևէ թերթում,
- հայտարարության տեղադրումը զանգվածային էլեկտրոնային լրրատվության միջոցներում (կայքերում, սոցիալական ցանցերում),
- հայտարարությունների տարածումը համայնքների մարդաշատ վայրերում (փակցնելով ավտոկանգառներում կամ շենքերի պատերին),
- հայտարարություններ տեղական ՋԼՄ-ներով (հեռուստատեսություն, ռադիո, թերթ),
- ոլորտի ակտիվ ԲՀԿ-ների շրջանում հայտարարության տարածումը էլեկտրոնային փոստի միջոցով,
- փոքր համայնքներում՝ հայտարարության հրապարակումը համայնքապետարանի շենքում,
- շահագրգիռ քաղաքացիների անհատական ծանուցումը:

4. *Հասարակությանը պիտի տրամադրվեն բազային տեղեկություններ իրականացվելիք նախագծի մասին, և խնդրին առնչվող ողջ տեղեկատվությունը պիտի մատչելի լինի քաղաքացիների ծանոթացման համար:*

Ի՞նչ պիտի պարունակի հանրությանը տրամադրվող բազային տեղեկատվությունը.

- ի՞նչ գործունեություն է նախատեսվում իրականացնել,
- որտե՞ղ է իրականացվելու և որքա՞ն տարածք է ընդգրկվելու նախատեսվող գործունեությունը,
- ովքե՞ր են նախաձեռնողները (ընկերության անվանումը, հասցեն, կապի միջոցները, կոնտակտային անձը),
- նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը (քարտեզներ, սխեմաներ, տեխնոլոգիաների նկարագրեր և այլն),
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի նախագիծն ու բնապահպանական կառավարման պլանը,
- պետական ո՞ր մարմինն է պատասխանատու որոշման ընդունման համար,
- ո՞րն է հասարակայնության մասնակցության ընթացակարգը,
- գործունեության իրականացման այլընտրանքային տարբերակների նկարագրությունը,
- այլ փաստաթղթեր՝ կախված գործունեության բնույթից (լիցենզիա, ջրօգտագործման թույլտվություն և այլն):

Որոշումների կայացման գործընթացի ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հանրության ծանոթացման համար.

❖ պետական մարմինները պարտավոր են շահագրգիռ հասարակայնությանը նրա հարցման հիման վրա անվճար, մատչելի դարձնել կայացվելիք որոշմանը վերաբերող ողջ տեղեկատվությունը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

❖ թույլատրվում է ողջամիտ չափերով վճարի գանձումը պետական մարմինների կողմից այնպիսի ծառայության համար, ինչպիսին է փաստաթղթերի պատճենահանումը, սակայն վճարի գումարը պետք է նախատեսի միայն պատճենի արժեքը, այլ ոչ թե տեղեկատվության պատրաստման հետ կապված աշխատանքի վճարը:

5. Հասարակական մասնակցության շրջանակներում յուրաքանչ-յուր քաղաքացու պիտի ընձեռվի մեկնաբանությունների ներկայացման և բացատրությունների սպասման հնարավորություն:

Հասարակական քննարկման (լսման) յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու դիտողություններ, փաստեր, վերլուծական տվյալներ կամ կարծիքներ և ստանալու համապատասխան բացատրություններ: Այդպիսի հնարավորությունը կարող է ենթադրել գրավոր կամ բանավոր դիտողությունների և առաջարկությունների ներկայացում հասարակական

լումների ընթացքում: Գրանք կարող են ունենալ տեղեկատվական տեղեկանքի, առաջարկի, վերլուծական տեղեկանքի, կարծիքի, այլընտրանքային որոշման, պաշտոնական ներկայացման կամ այլ ձև:

6. Որոշում կայացնող մարմինները պարտավոր են իրենց մշակած որոշումներում պատշաճ կերպով հաշվի առնել մասնակցության գործընթացում հանրության կողմից ներկայացված կարծիքները:

Սա նշանակում է, որ որոշում կայացնող մարմինները պարտավոր են.

✓ ուսումնասիրել հանրության կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները,

✓ ուշադրություն դարձնել այն դիտողություններին, առաջարկներին կամ դրանց բաղադրիչներին, որոնք պարունակում են մարդկանց առողջության կամ շրջակա միջավայրի վերաբերյալ հիմնավոր անհանգստություն,

✓ մշակել միջոցներ կամ որոշումներ, որոնք կարող են չեզոքացնել այդպիսի անհանգստության պատճառները,

✓ վերջնական որոշում կայացնելու ժամանակ հաշվի առնել մասնակցության գործընթացում հանրության կողմից ներկայացված կարծիքները:

7. Հասարակայնությանը պիպի պրամադրվի Կրեղեկարվություն կայացված վերջնական որոշման մասին:

Որոշում կայացնող մարմինները պարտավոր են ընդունված վերջնական որոշման մասին տեղեկացնել հանրությանը, ինչը ենթադրում է ոչ միայն ընթացակարգի մասնակիցների կամ շահագրգիռ հասարակայնության տեղեկացումը, այլև հասարակության լայն շերտերի ընդհանուր ծանուցումը, տեղեկացումը:

3.5. Հասարակության մասնակցության մակարդակն ու հիմնական ձևերը

Կախված նրանից, թե ինչպիսին է կազմակերպված հասարակության մասնակցությունը, և ինչպես է շահագրգիռ հասարակությունը ներգրավվում որոշումների կայացման գործընթացում, ընդունված է տարբերակել հասարակության մասնակցության չորս հիմնական մակարդակ կամ, այսպես կոչված, աստիճան.

1. Քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սա հասարակության մասնակցության բարձրագույն աստիճանն է, երբ առկա է քաղաքացիական վերահսկողություն, և որոշումների կայացման գործընթացում ապահովվում է հասարակության հնարավորինս ամեն-

նախյն մասնակցությունը: Օրինակ՝ դա կարող է լինել տեղական հանրաքվեն՝ ինչ-որ դժվար լուծելի և շատ կարևոր բնապահպանական հիմնախնդրի շուրջ:

Մասնակցության այս աստիճանում հասարակության մեջ նկատվում են անհատների, մարդկանց խմբերի կամ ՔՀԿ-ների համախմբում, նախաձեռնությունների ձևավորում և հասարակության մասնակցության ու հանրային շահերի պաշտպանության ինքնուրույն գործողությունների իրականացում:

2. Իրական մասնակցություն

Մասնակցության այս աստիճանը ենթադրում է փոխադարձ վատահույություն, համագործակցություն, կողմերի համատեղ պատասխանատվության ստանձնում՝ սկսած համատեղ պլանավորումից, հիմնախնդրի քննարկումից, լուծումների տարբերակների մշակումից և վերջապահ լուծման ճիշտ տարբերակի ընդունմամբ ու իրականացմամբ: Այն կարող է իրականացվել հասարակության տարբեր շահագրգիռ խմբերի հետ խորհրդատվական հանդիպումների ու լուծումների, մասնագիտական քննարկումների և բանակցությունների միջոցով: Իրական մասնակցությունը ենթադրում է պաշտոնական երկխոսության ծավալում շահագրգիռ հասարակության, գործունեությունը նախաձեռնող կողմի և որոշում կայացնող պետական ու տեղական մարմինների միջև:

Այս դեպքում քաղաքացիական մասնակցությունը ընկալվում է որպես մարդու իրավունքների անբաժանելի մաս և ոչ թե որոշում կայացնողների կամ նախաձեռնողների՝ նպատակներին հասնելու միջոց:

3. Խորհրդանշական, չեական կամ պասիվ մասնակցություն

Մասնակցության այս աստիճանում հասարակությունը փաստացի մասնակցում է տարբեր պաշտոնական մարմինների կողմից կազմակերպված լուծումներին ու քննարկումներին, բայց չունի դրանցում կայացվող որոշումների վրա ազդելու իրական հնարավորություն: Այս դեպքում որոշում կայացնող մարմինները պարզապես տարածում են կայացվելիք որոշման վերաբերյալ դրական տեղեկություններ և դիմում հասարակությանը միայն լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ հասարակության կարծիքն ու տրամադրությունները հասկանալու համար, որպեսզի ավելի ամբողջական ընկալեն քննարկվող հարցը, կարողանան տիրապետել իրավիճակին և մեղմեն հասարակության հնարավոր դիմադրությունը:

Սա կարող է իրականացվել հանրային կարծիքի հարցումների, փորձագետների և հասարակության որոշ ներկայացուցիչների հետ հարցազրույցների, խորհրդատվական հանդիպումների և հանրային լուծումների անցկաց-

ման, մասնագիտական վերլուծությունների, քարոզչական բնույթի տպագիր նյութերի տարածման, հեռուստահաղորդումների ու մամուլ առույտների կազմակերպման միջոցով:

Մասնակցության այս ձևական աստիճանը բավականին տարածված է Հայաստանում: Օրինակ՝ օրենքով սահմանված հանրային լսումների կազմակերպումն ու անցկացումն այսօր մեծ մասամբ տեղի են ունենում քննարկ-վելիք հարցերի վերաբերյալ մասնակիցների բացարձակ անտեղյակության պայմաններում՝ խախտելով հասարակության մասնակցության հիմնական սկզբունքներն ու պահանջները:

Երբեմն կայացվելիք որոշման մասին մամուլի, հեռուստատեսության ու համացանցի միջոցով ձևավորում են որոշակի դրական հանրային կարծիք, և հասարակությանը թվում է, թե ինքը տեղյակ է ու մասնակցում է որոշում կայացնելու գործընթացին, բայց իրականում զրկված է որոշման քննարկման և իրական մասնակցության հնարավորությունից: Մասնակցությունն այս դեպքում սահմանափակվում է միայն որոշումների կամ կատարված իրադարձությունների մասին տեղեկատվության ստացմամբ:

Կամ ոլորտի հեղինակավոր մասնագետներ ներգրավելով՝ խնդիրները նախապես ներկայացնում են նախաձեռնողի համար ցանկալի լույսի ներքո, պատրաստի որոշումը քննարկումների ժամանակ հրամցնում են հասարակությանը և հասարակության մասնակցությունը ապահովում են միայն որոշ հարցերի քննարկման և կայացվող որոշմանը լեգիտիմություն հաղորդելու նպատակով:

Լավագույն դեպքում մասնակցության փորձեր են անում ոլորտի հասարակական կառույցները, որոնք տեղեկատվություն ստանալու համար հարցումներ են ուղղում որոշում կայացնող մարմիններին, ներկայացնում են առաջարկություններ կամ մամուլում հրապարակում թեմային առնչվող հոդվածներ:

4. Մանիպուլյացիա

Սա որոշում կայացնողների կողմից հասարակության մասնակցությունը իրենց ցանկալի հունով ուղղորդելու, հիմնական սկզբունքների խախտումներով մասնակցություն բեմադրելու և հասարակությունից մասնակցության փաստաթղթեր (արձանագրություններ, նկարներ, ստորագրություններ) կորզելու գործողությունների ամբողջությունն է: Օրինակ՝

➤ կայացվող որոշման կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ ոչ լիարժեք կամ ոչ հավաստի տեղեկատվության տրամադրում ու տարածում, որպեսզի հարցի վերաբերյալ ձևավորվի հանրային դրական կարծիք,

➤ կայացվող որոշման միայն տնտեսական և սոցիալական կողմերի քննարկում ու շեշտադրում, չնայած կայացվող որոշումը վերաբերում է առավելապես շրջակա միջավայրի վիճակին, մարդկանց կյանքի որակի ու առողջության վրա բացասական ազդեցությանը,

➤ հասարակական լսմանը կամ քննարկմանը ոչ ճիշտ հարցերի կամ այնպիսի հարցերի ոչ ճիշտ ներկայացումը (առանց գրոյական տարբերակի կամ այլընտրանքի), որոնց վերաբերյալ հասարակությունը ի վիճակի չէ որոշում կայացնելու,

➤ հանրային քննարկումների և լսումների անցկացումը ոչ շահագրգիռ հասարակայնության հետ,

➤ փոքր համայնքներում հասարակական լսումների կեղծումը և միայն իբր անցկացրած լսման արձանագրումը՝ համայնքի որոշ ներկայացուցիչների (*գյուղապետ, նրա մերձակիորներ կամ գյուղապետարանի աշխատակիցներ*) ստորագրություններով,

➤ հասարակական քննարկումների անցկացման մասին ոչ պատշաճ տեղեկացումը և ներկայացումը, ինչի պատճառով համայնքից ոչ ոք ցանկություն չի հայտնել մասնակցել քննարկմանը,

➤ հասարակական լսումներին ու քննարկումներին միայն կամ առավելապես այն մարդկանց մասնակցության ապահովումը, ովքեր կարող են նախատեսվող գործունեությունից կամ կայացվող որոշումից ունենալ նյութական կամ այլ տեսակի շահ:

Որպեսզի որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում առանձնացվեն հասարակության մասնակցության հնարավոր ձևերը, անհրաժեշտ է հաշվի առնել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Հասարակության մասնակցության ձևեր ասելով՝ պետք է հասկանալ բոլոր այն գործողությունների ամբողջությունը, որոնց իրականացումն անհրաժեշտ է որոշումների կայացման գործընթացին մասնակցելու համար և՛ մինչև բուն որոշման կայացումը, և՛ որոշման իրականացման փուլում:

Հասարակության մասնակցության ձևերը մինչև բուն որոշման կայացումը

1. Որոշում կայացնողներին դիմելու ուղղակի ձևեր կիրառվում են առանձին կազմակերպությունների կամ անհատների կողմից և ունեն սահմանափակ ազդեցություն: Մասնակցության այդպիսի ձևերից են՝

- նամակները,
- տեղեկատվության ստացման հարցումները,
- ստորագրահավաքները,

- առաջարկությունները,
- դիմումները թե՛ գծի հեռախոսահամարներով,
- դիմումները վերադաս մարմիններին,
- դիմումները մարդու իրավունքների պաշտպանին,
- անձնակազմի հանդիպումները պաշտոնյաների հետ:

2. Որոշում կայացնողներին դիմելու հանրային ձևեր. Իրականացվում են որոշում կայացնող մարմինների վրա ազդելու և հանրային կարծիք ձևավորելու համար: Դրանցից են՝

- բաց նամակները,
- հանրային հայտարարությունները,
- զանգվածային ստորագրահավաքները,
- սոցիալական ցանցերում հասարակական խմբերի ստեղծումը,
- հանրային կարծիքի հարցումները,
- սոցիալական գովազդները,
- տեղեկատու թերթիկների, բուկլետների, թռուցիկների տարածումը,
- սեմինար-քննարկումները, դասախոսությունները,
- հանրահավաքները, երթերը, ֆլեշ-մոբերը, ցույցերն ու բողոքի այլ ակցիաները,
- մամլո ասուլիսները, հեռուստահաղորդումները, բանավեճերը,
- նախաձեռնությունների և շահագրգիռ խմբերի ձևավորումը,
- հասարակական լսումների, քննարկումների ընթացքում ՉԼՄ-ների հրապարակումներում և վերլուծություններում արտահայտված կարծիքները,
- որոշում կայացնողների հետ հանրության ակտիվ խմբերի հանդիպումներն ու ընդունելությունները,
- տեղական հանրաքվեն,
- այլընտրանքային զեկույցների կազմումն ու հրապարակումը,
- ցուցահանդեսները, ֆիլմադիտումները, համերգները և այլն:

3. Որոշում կայացնողների հետ հասարակութայն երկխոսութայն ձևեր.

- խորհրդատվական հանդիպումներ,
- մասնագիտական քննարկումներ,
- համատեղ աշխատանքային խմբերի ձևավորում,
- ուսուցողական այցելություններ,
- ընդունելություններ և լսումներ,

- համագործակցության հուշագրերի ստորագրում,
- բանակցային հարթակների ձևավորում,
- համակարգող խորհուրդներում և հանձնաժողովներում հասարակության ներկայացուցիչների ընդգրկում,
- երկխոսություն ՉԼՄ-ների միջոցով և այլն:

4. Որոշում կայացնողների վրա ազդելու միջազգային ջեներ

- ❖ դիմումներ կառավարական միջազգային կառույցներին,
- ❖ դիմումներ հասարակական միջազգային կազմակերպություններին,
- ❖ դիմումներ այլ երկրների կառավարություններին, դեսպանատներին, հյուպատոսարաններին և ներկայացուցչություններին,
- ❖ խնդրի բարձրաձայնումը միջազգային հեղինակավոր ՉԼՄ-ներով,
- ❖ այլընտրանքային զեկույցների ներկայացում ՍԱԿ-ում, Եվրախորհրդում, ԵԱՀԿ-ում և այլուր:

Հասարակության մասնակցության ջեները որոշման իրականացման փուլում

Այս փուլում հասարակության կողմից կարող են կիրառվել հասարակության մասնակցության՝ վերը թվարկված գրեթե բոլոր ձևերը, բայց կան մասնակցության ձևեր, որոնք բնորոշ են հենց որոշման իրականացման փուլին: Օրինակ՝

- ✓ ՀԿ-ների մասնակցություն որոշման իրականացման ուղղությամբ հայտարարված մրցույթներին և շահելու դեպքում որոշակի գործառույթների կամ դրամաշնորհային ծրագրերի իրականացում,
- ✓ որոշման իրականացմանը տեղեկատվական, կազմակերպական կամ վարչական աջակցություն,
- ✓ որոշման կատարման ուղղությամբ իշխանությունների կողմից ՀԿ-ներին տրամադրված որոշակի լիազորությունների կատարում,
- ✓ հասարակության ներգրավում և մասնակցության ապահովում որոշման իրականացման փուլում,
- ✓ որոշման կատարման ուղղությամբ լրացուցիչ միջոցների ներգրավում՝ կամավորներ, բարեգործներ, միջազգային կառույցներ և այլն,
- ✓ մասնակցություն որոշման իրականացման ռազմավարություններին, պլանների կամ ծրագրերի մշակման գործընթացներին,
- ✓ որոշման իրականացման գործընթացի մշտադիտարկում և վերահսկողություն ՀԿ-ների կողմից,
- ✓ որոշման կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվություններ, զեկույցներ և վերլուծություններ:

3.6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և հասարակության մասնակցությունը այդ գործընթացին

Ըստ ՄԱԿ-ի ձևակերպման՝ «ՇՄԱԳ» ասելով հասկանում են որոշակի գործունեության բնապահպանական հետևանքների նախնական գնահատման վերլուծություն, այսինքն՝ գործունեություն, որն ուղղված է բացահայտելու և կանխորոշելու նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի, բնակչության առողջության և սոցիալական բարեկեցության վրա:

ՇՄԱԳ անցկացվում է ինչպես նախատեսվող գործունեության առանձին փուլերի, այնպես էլ հայեցակարգերի, ծրագրերի և գլխավոր հատակագծերի համար:

ՇՄԱԳ գործընթացում հաշվարկվում են ենթադրվող ազդեցության չափերը, և կատարվում է ներգործության կանխորոշում, դիտարկվում են նախատեսվող գործունեության այլընտրանքային, այդ թվում նաև զրոյական տարբերակներ, մշակվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ և առաջարկներ ընթացիկ ու հետմախազմային ծրագրերի մշտադիտարկման վերաբերյալ և, ամենակարևորը, անցկացվում են հասարակական լսումներ՝ բացառությամբ հատուկ նշանակության օբյեկտների, որոնց մասին տեղեկատվությունը պահանջում է գաղտնիություն՝ կապված պետական կամ առևտրային գաղտնիքի հետ:

Հայաստանի Հանրապետությունում 1995թ. հաստատվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքը, որը կարգավորում է ՇՄԱԳ-ի փորձաքննության գործընթացում ծագած իրավահարաբերությունները:

Համաձայն այդ օրենքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել հայեցակարգի և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և բնականոն զարգացման վրա:

ՇՄԱԳ գործընթացը կազմված է հետևյալ փուլերից.

- ծանուցում ՇՄԱԳ-ի վերաբերյալ՝ հասարակության տեղեկացում և առաջին հասարակական լսում. այս փուլն ավարտվում է ՇՄԱԳ-ի անցկացման անհրաժեշտության վերաբերյալ որոշման ընդունմամբ,
- նախատեսվող գործունեության վերաբերյալ նախազմային և փորձաքննական փաստաթղթերի քննարկում, երկրորդ հասարակական լսում,

➤ քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն, որը տրվում է արտոնագիր ունեցող փորձագետի կողմից, երրորդ հասարակական լսում,

➤ որոշման ընդունում և փորձագիտական եզրակացության հանձնում:

Առանց ՇՄԱԳ-ի անցկացման և փորձաքննական դրական եզրակացության առկայության արգելվում է նախատեսվող գործունեության իրականացումը:

Ավելի մանրամասն քննարկենք ՇՄԱԳ գործընթացի առանձին փուլերը.

ՀՀ ՇՄԱԳ օրենքը սահմանում է գործունեության և հայեցակարգերի այն շրջանակները, որոնք անառարկելիորեն ենթակա են փորձաքննության:

ՇՄԱԳ-ի ենթակա գործունեության համար քննարկվում են այն փաստաթղթերը, որոնք պարտադիր պետք է ընդգրկեն.

ա) նախատեսվող գործունեության հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշում, նկարագրում և գնահատում

▪ կլիմայական պայմանների, բուսական և կենդանական աշխարհի, էկոհամակարգերի առանձին տարրերի, նրանց փոխհարաբերության ու կայունության, բնության հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտի, երկրաձևաբանական կառույցների, օդի, մակերեսային և ստորերկրյա ջրերի, ընդերքի, հողի վրա,

- բնակչության առողջության և բարեկեցության վրա,
- բնակավայրերի շրջակա միջավայրի վրա,
- բնական պաշարների օգտագործման վրա,
- պատմամշակութային հուշարձանների վրա:

բ) այլընտրանքային լուծումներ, այդ թվում՝ գրոյական գործողության այլընտրանք (նախատեսվող գործունեության բացառում), դրանց համեմատական վերլուծություն և առավել ընդունելի տարբերակի ընտրություն,

գ) նախատեսվող գործունեության բնապահպանական վնասակար ազդեցության պատճառով ընտրված գրոյական տարբերակի դեպքում տնտեսական և սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի վրա հետևանքների մանրակրկիտ գնահատում:

Շինարարության, գործարկման, կազմաքանդման ընթացքում և հետո, ինչպես նաև վթարային և արտակարգ իրավիճակների դեպքում գնահատվում է կառույցի՝ շրջակա միջավայրի վրա ունեցող ազդեցությունը:

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա անցկացվում է հասարակական լսում:

Մասնագիտական եզրակացությունը կարող են մշակել միայն այնպիսի անձինք, ովքեր ստացել են լիազորված մարմնի կողմից տրված մասնագի-

տական իրավասության հավաստագրեր:

Մասնագիտական եզրակացությունը մշակելիս փորձաքննության են ենթարկվում՝

ա) փաստաթղթերի լիարժեքությունը,

բ) հասարակության, ազդակիր համայնքի և պետական շահագրգիռ մարմինների կարծիքները,

գ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության բոլոր դրական և բացասական ազդեցությունների ամբողջականության առկայությունը, ինչպես նաև դրանց փոխներգործությունը,

դ) կիրառված գնահատման մեթոդները և տեղեկատվության ամբողջականությունը,

ե) շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության վերացման կամ նվազեցման նպատակով առաջարկված տեխնիկական լուծումների համապատասխանությունը ժամանակակից գիտական և տեխնիկական մակարդակին,

զ) նախատեսված գործունեության այլընտրանքային լուծումները,

է) շրջակա միջավայրի վրա նախատեսված գործունեության վնասակար ազդեցության բացառման կամ նվազեցման, ինչպես նաև նախատեսված գործունեության կիրառման և շահագործման միջոցառումների և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ առաջարկությունները:

Մասնագիտական եզրակացության հիման վրա անցկացվում են հասարակական լուծումներ (երրորդ հասարակական լուծումներ), որից հետո մասնագիտական եզրակացության, ինչպես նաև հասարակական լուծումների անցկացման արձանագրությունների հիման վրա լիազորված մարմնի կողմից (այսօր՝ ՀՀ բնապահպանության նախարարություն) տրվում է դրական կամ բացասական փորձագիտական եզրակացություն: Մասնագիտական իրավասության մասին արտոնագրերի տրման կարգը կանոնարկվում է ՀՀ Կառավարության 1996թ. դեկտեմբերի 20-ի թիվ 386 որոշմամբ: Որոշումը, ինչպես նաև փորձաքննության ընթացքում ծագած բոլոր վիճելի հարցերը կարող են բողոքարկվել դատական կարգով:

ՇՄԱԳ գործընթացի մասնակիցներ են համարվում՝

○ ձեռնարկող անձը՝ պատվիրատու կամ նախաձեռնող, ով պետք է իրականացնի նախատեսվող գործունեությունը կամ հայեցակարգը, նախաձեռնողը տեղեկացնում է լիազորված մարմնին նախատեսվող գործունեության մասին, իրականացնում ՇՄԱԳ գործընթացը, կազմակերպում է հասարակական լուծումները, ապահովում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բոլոր հետազոտությունների և աշխատանքների ֆինանսավորումը,

○ ներկայացնող անձը՝ կատարող կամ նախապատրաստող անձ, ով բնապահպանական փորձաքննության փաստաթղթերի նախապատրաստման փուլում կազմում է ՇՄԱԳ-ի փաթեթը, դիտարկում և հաշվի է առնում բնապահպանական պայմանները և պահանջները. այդ փաստաթղթերը համարվում են ՇՄԱԳ-ի անցկացման հայտարարությունը և հիմնավորող փաթեթը,

○ շահագրգիռ հանրությունը՝ հասարակական կազմակերպություն, ազդեցության ենթակա տարածքի բնակչություն, հանրության խմբեր և առանձին մարդիկ, որոնց շահերը առնչվում են նախատեսվող գործունեության, հայեցակարգերի և ծրագրերի հետ (համաձայն ՍԱԿ-ի մի շարք նորմատիվային ակտերի բնորոշման՝ «հանրություն» նշանակում է մեկ կամ մի քանի ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ բացառությամբ քննարկվող հարցի կապակցությամբ որոշում կայացնողների, ինչպես նաև փորձագետները կամ լիազորված անձինք, ովքեր պատրաստում են մասնագիտական եզրակացությունը),

○ լիազորված մարմինը՝ պետական մարմին, որն իրականացնում է ՇՄԱԳ-ի փորձաքննությունը և որոշում ընդունում նախատեսվող գործունեության կամ հայեցակարգի վերաբերյալ (ներկայումս լիազորված մարմին են համարվում ՀՀ բնապահպանության նախարարությունը և նրա ենթակայությամբ գործող «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը):

ՇՄԱԳ-ի ընթացակարգը հասարակությանը հնարավորություն է ընձեռում անմիջականորեն մասնակցելու և ազդելու ընդունվող որոշումների վրա:

Հասարակության մասնակցությունը ՇՄԱԳ գործընթացին նպաստում է՝

❖ ՇՄԱԳ-ի նկատմամբ հասարակության հետաքրքրությունների դրսևորմանը,

❖ տեղական նշանակության հիմնախնդիրների բացահայտմանը,

❖ պլանավորման գործընթացների և գործունեության գնահատման հուսալիության բարձրացմանը,

❖ հիշյալ գործունեության, հայեցակարգերի այլընտրանքային առավել արդյունավետ տարբերակների որոնմանը,

❖ լրացուցիչ տեղեկատվության ստացմանը,

❖ հասարակության ուշադրությունից դուրս մնացած (անտեսված) խմբերի հետաքրքրությունների բացահայտմանը,

❖ նախագծի, ծրագրերի իրագործման հարցերում շահագրգիռ անձանց կողմից հնարավոր ճնշման հաղթահարմանը,

❖ նախաձեռնողների, իշխանությունների և հասարակության միջև վիճահարույց իրադրությունների հաղթահարմանը,

- ❖ վարչական մարմինների կողմից որոշումների ընդունման սահմանված կանոնակարգի պահպանմանը,
- ❖ շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանը,
- ❖ բնակչության բնապահպանական դաստիարակությանը:

Հասարակության մասնակցությունը ՇՄԱԳ-ի առաջին փուլում՝ հիմնախնդրի և նախագծի ազդեցության ծավալների բացահայտման շրջանում, հիմնականում ենթադրում է նախագծի, նրա նպատակների մասին հասարակության տեղեկացում և տարբեր խմբերի կարծիքների բացահայտում: Այդ փուլում հնարավոր է «նախագծին կողմ» և «նախագծին դեմ» խմբերի ձևավորում:

Երկրորդ փուլում հասարակության մասնակցությունը նպաստում է նախատեսվող գործողության տարածքում շրջակա միջավայրի վիճակի իրական վերլուծությանը, նրա՝ հատուկ հետաքրքրություն ներկայացնող և հետազոտման կարիք ունեցող բաղադրիչների բացահայտմանը:

Այս փուլում հասարակությունը կարող է բացահայտել հարցի լուծման՝ նախկինում հաշվի չառնված այլընտրանքային ուղիներ: Որոշ (պետության կողմից հաստատված) նորմատիվների բացակայության պայմաններում հասարակական կարծիքը կարող է հանդես գալ որպես շրջակա միջավայրի փոփոխության որոշիչ գործոն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակման նորմատիվների մշակման ժամանակ հասարակության մասնակցությունը քննարկված տարբերակների լիարժեքության երաշխիք է, ինչը բարձրացնում է նաև ընդունվող որոշումների և նրանց իրականացման որակը:

Այլընտրանքային տարբերակների համեմատության և առավել ընդունելի տարբերակների բացահայտման պրոցեսում հասարակության մասնակցությունը թույլ կտա հաշվի առնել տեղական հետաքրքրությունները, բացահայտել հնարավոր վիճահարույց խնդիրները:

Հասարակության մասնակցության կարևորագույն փուլ է համարվում նրան փորձագետների կարծիքների ներկայացումը և դրանց վերաբերյալ անցկացվող հասարակական քննարկումները:

Որոշումներ կայացնելու փուլում հասարակության մասնակցությունը ենթադրում է տեղյակ պահել հասարակությանը ընդունված որոշումների և այդ որոշումների հիմնավորման մասին՝ վիճահարույց խնդիրների վերջնական կարգավորման նպատակով, եթե այդպիսիք առկա են:

Մի շարք երկրների օրենսդրության համաձայն՝ հասարակությունը կարող է ծանոթանալ նախագծային փաստաթղթերին և անցկացնել անկախ հասարակական բնապահպանական փորձաքննություն: Հասարակա-

կան բնապահպանական փորձաքննության կազմակերպումը լրացուցիչ հր-նարավորություններ է ընձեռում հասարակությանը՝ պետական նախագծային փաստաթղթերին ծանոթանալու և պետական փորձաքննության մասնակցելու, ինչպես նաև ընձեռում է անկախ կարծիքի ձևավորման հնարավորություն: Ցավոք, ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքով հասարակության անկախ փորձաքննության իրավունքը չի դիտարկվում: Օրենքի գործունեությունը զգալիորեն սահմանափակվում է նաև հասարակության մասնակցությունը կարգավորող ենթօրենսդրական ակտերի, մեթոդական ձեռնարկների և ընթացակարգերի փաստացի բացակայությամբ:

ՇՄԱԳ-ի գործընթացն այսօր Հայաստանում բնապահպանական կա-րևորագույն որոշումների ընդունման գործում հասարակության մաս-նակցությունն ապահովող միակ ուղին է:

**4. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ,
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

**4.1. Հասարակության՝ շրջակա միջավայրի
պահպանության իրավունքը**

Մարդու՝ իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածով: Բացի դրանից, ըստ նույն այդ հոդվածի, յուրաքանչյուր ոք պարտավոր է անձամբ, ինչպես նաև այլոց հետ համատեղ, պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Սա մարդու ամենաբնական և կարևոր կենսական պահանջմունքներից մեկն է, որը պետք է լինի ժողովրդավարական ցանկացած պետությունում վարվող քաղաքականության առանցքային սկզբունքներից մեկը: Այս գաղափարն ամրագրված է մեր երկրի Սահմանադրությունում, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերում:

Յուրաքանչյուր պետության էկոլոգիական քաղաքականության զրլիսավոր նշանակությունն այն է, որ երաշխավորվի հասարակության տնտեսական և էկոլոգիական շահերի գիտականորեն հիմնավորված ճիշտ հարաբերակցությունը՝ միաժամանակ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ մարդու՝ առողջ և կյանքի համար բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը ապահովելու համար:

Օրենքի իմացությունը կօգնի մեր հասարակության յուրաքանչյուր խելամիտ անդամին մշտադիտարկման և վերահսկման միջոցով որևէ գործունեություն իրականացվելու ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը ժամանակին հայտնաբերելու և հետևանքներն արագ վերացնելու՝ հնարավորինս բացառելով շրջակա բնական միջավայրին և մարդու առողջությանը անդառնալի վնասներ հասցնող ազդեցությունը:

Իրավական նորմերի այն ամբողջությունը (ներառյալ ինտեգրացված միջազգային իրավունքը), որը կարգավորում է հասարակական հարաբերությունները բնօգտագործման, շրջակա բնական միջավայրի պահպանության և էկոլոգիական անվտանգության ապահովման բնագավառներում, կոչվում է շրջակա միջավայրի պահպանության իրավունք:

ՀՀ օրենսդրական դաշտում շատ կարևոր դեր ու նշանակություն ունեն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը և «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկությունների մատչելիության, որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի համաձայնագիրը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2001թ.-ին:

Նշված օրենքի գաղափարախոսությունը հիմնականում կառուցված է փորձաքննության գործընթացում հասարակության լայն շրջանակներ ներգրավելու և մասնակցության արդյունքում համապատասխան փոփոխություններ անելու վրա, բայց առ այսօր ՀՀ Կառավարությունը և լիազոր մարմինը չեն ընդունել Օրենքն առավել կիրառելի դարձնելու համար հենց Օրենքի պահանջներից բխող ընթացակարգերը, չեն սահմանել Օրենքի պահանջների կատարման նորմերն ու չափորոշիչները:

Առ այսօր ՀՀ-ն ստորագրել է ավելի քան 16 միջազգային բնապահպանական կոնվենցիա և մի քանի միջազգային արձանագրություն, որոնց զգալի մասը նաև վավերացրել է, սակայն դեռևս բավարար չեն մեր պետության կողմից իրականացվող այն գործողությունները և ներդրվող ջանքերը, որոնք պետք է ապահովեն երկրում շրջակա միջավայրի պահպանությանն ու քաղաքացիների էկոլոգիական անվտանգությանն ուղղված լիարժեք քաղաքականության իրականացումը՝ միջազգայնորեն սահմանված չափանիշներից համապատասխան:

Մարդու՝ առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը լիարժեք իրացնելու համար Հայաստանում պետք է կատարել սկզբունքային մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝

✓ տնտեսական գործունեության նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունում՝ հաշվի առնելով ոչ միայն դրանից ստացվող ֆինանսական օգուտները, այլև շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը հասցվող վնասները,

✓ լիարժեքորեն ապահովել բնապահպանական տեղեկատվության թափանցիկությունը և շահագրգիռ հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նախագծերի, ծրագրերի, պլանների, քաղաքականության, ռազմավարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներին՝ հիմք ընդունելով Օրհուսի կոնվենցիայի պահանջները,

✓ օրենսդրորեն ամրագրել էկոլոգիապես ոչ մաքուր տնտեսական գործունեությունների նկատմամբ (հանքարդյունաբերություն և այլն) էկոլոգիապես մաքուր տնտեսական գործունեությունների (օրգանական գյուղատնտեսություն, էկոտուրիզմ և այլն) գերակայության սկզբունքը,

✓ ազգային օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով հաստատված չափանիշներին և նորմերին համապատասխան՝ ապահովել անհրաժեշտ երաշխիքներ տնտեսվարող սուբյեկտների կողմից շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտ, ջրեր, հողեր և այլն) աղտոտման սահմանային չափերը չգերազանցելու համար. դրանք խախտելու դեպքում շրջակա միջավայրի բաղադրիչներին հասցված վնասը գնահատել և տնտեսվարող սուբյեկտներից պահանջել փոխհատուցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

✓ ապահովել իրավական երաշխիքներ արտադրական գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկված վայրերում ապրող բնակչության առողջության համարժեք փոխհատուցման և պարբերական բուժման ծախսերի համար՝ վնասակար գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի միջոցների հաշվին, պետության պատասխանատվությամբ,

✓ ապահովել բնական պաշարների ողջամիտ օգտագործման՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածով ամրագրված սկզբունքի պահպանումը և ապագա սերունդների իրավունքները պաշտպանելու նպատակով ներդնել չվերականգնվող պաշարների քվոտավորված և խելամիտ օգտագործման պրակտիկա:

4.2. Հանրության բնապահպանական շահերի պաշտպանություն

Ի՞նչ է հանրության բնապահպանական շահերի պաշտպանությունը

Հանրության բնապահպանական շահերի պաշտպանությունը պլանավորված գործողությունների տրամաբանական շարք է, որը նպատակաուղղված է շրջակա միջավայրի պահպանության հանրային քաղաքականության փոփոխությանը հասարակության որոշակի խմբի նպատակներին հասնելու համար:

Սա շարունակական հանրային երկխոսություն է որոշում կայացնողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև:

Քաղաքացիական հասարակությունը ինչու՞ պիտի զբաղվի շահերի պաշտպանությամբ

➤ Քանի որ օրենքներով սահմանված այլ մեթոդներն ու միջոցները հիմնականում բավարար չեն նպատակներին հասնելու համար, ուստի.

➤ քաղաքացիական հասարակության կառույցները (ԶՀԿ), որոնք

հանրային կարծիքի ձևավորման գործում ազդեցություն ունեն, պետք է օգտագործեն դա որոշում կայացնողների վրա ազդելու նպատակով,

➤ հասարակության հիմնախնդիրները լուծելու համար հարկավոր են քազմակողմանի մոտեցումներ /պետական, հասարակական, բիզնես, լրատվամիջոցներ և այլն/:

Որո՞նք են շահերի պաշտպանության (ՇՊ) իրականացման մակարդակները

Տեղական, երբ առաջարկվում է փոփոխել կամ ընդունել որևէ որոշում տարածքային կամ տեղական ինքնակառավարման մակարդակում:

Հանրապետական, երբ առաջարկվում է փոփոխել կամ ընդունել օրենք, ենթաօրենսդրական ակտ կամ հանրապետական նշանակության այլ որոշում:

Միջազգային, երբ առաջարկվում է փոփոխել կամ ընդունել տարածաշրջանային կամ համաշխարհային որևէ կառույցի փաստաթուղթ կամ քաղաքականություն:

Բոլոր ՀԿ-ները, անկախ իրենց ուղղվածությունից, ստեղծվում են որոշակի խումբ մարդկանց շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով՝ հանդես գալով որպես այդ խմբի շահերի պաշտպաններ: Այդ կազմակերպությունների կողմից իրականացվող ՇՊ գործընթացը կարելի է կոչել հանրային շահերի պաշտպանություն:

Շահերի պաշտպանության ռազմավարություն

Ռազմավարությունը լայն հասկացություն է, որն այս դեպքում թույլ է տալիս գնահատել՝

- որտեղ եք գտնվում,
- ուր եք ցանկանում հասնել,
- ինչպես հասնել նշանակետին:

ՇՊ ռազմավարության մշակման հիմնական քայլերն են՝

1. սահմանել շահերի պաշտպանության քարոզարշավի գլխավոր խնդիրը,
2. ձևակերպել վերջնական և միջանկյալ նպատակները,
3. որոշել նպատակային խումբը (թիրախը),
4. ձևավորել աջակցություն՝ որոշելով աջակիցներին և համախոհներին,
5. մշակել ասելիքը և անելիքը,
6. ընտրել հաղորդակցվելու եղանակները,

7. հայթայթել միջոցներ,
8. մշակել իրականացման պլան:

Շահերի պաշտպանության մարտավարություն

Մարտավարությունը ՇՊ ռազմավարության խնդիրների համար ընտրվող ձևերն են: Դրանք են՝

- ուսուցում,
- տեղեկատվության օգտագործում, իրազեկում,
- հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված միջոցառումներ,
- նամակային քարոզարշավ,
- լոբբինգ,
- ՁԼՄ-ների և սոցիալական ցանցերի լայն ներգրավում,
- համախոհների միավորում, կոալիցիաների ձևավորում,
- ցույցեր, երթեր, բոյկոտ,
- խնդրի դատական վիճարկում,
- և այլն:

4.3. Հասարակական բնապահպանական մշտադիտարկում (մոնիտորինգ) և վերահսկողություն

Հանրային բնապահպանական վերահսկողությունը բազմափուլ մի գործընթաց է, որն ընդգրկում է գործողությունների լայն շրջանակ՝ սկսած որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովումից, վերջացրած այդ գործընթացին հասարակության անմիջական մասնակցությամբ՝ հանուն հանրության բնապահպանական անվտանգության և մարդու՝ առողջ ու բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի իրացման:

Ի՞նչ է բնապահպանական մշտադիտարկումը

Այս դեպքում, մշտադիտարկում ասելով, պետք է հասկանալ բնապահպանական ոլորտի սոցիալական գործունեության որոշակի հատվածի՝ սահմանված սիսեմայով պարբերաբար անցկացվող ուսումնասիրություն:

Մշտադիտարկման գործողությունների նպատակների և թեմայի ընտրությանը տվորաբար նախորդում է սոցիալական իրականության այն հատվածի վերաբերյալ պատկերացում կազմելը, որը որոշակի պատճառներով հետաքրքրում է հասարակությանը: Կազմակերպության մեջ այդպիսի պատկերացում է ձևավորվում այն տվյալների հիման վրա, որոնք ստաց-

վում են մամուլից, կազմակերպության ստացած դիմում-բողոքներից, վերահսկիչ մարմինների հաշվետվություններից կամ արժանահավատության տարբեր աստիճանի հասանելի այլ աղբյուրներից:

Մշտադիտարկումն ունի տարբեր գործառնություններ.

○ **Ճանաչողական գործառնություն.** այս դեպքում այն հնարավորություն է տալիս տվյալներ ստանալ հանրային շահերի և մարդու իրավունքների խախտումների ծավալների մասին:

○ **Օժանդակ գործառնություն.** այս դեպքում այն նպաստում է հանրային շահերի և մարդու իրավունքների խախտումներն ապացուցող փաստացի տվյալների՝ ավելի լայն տեսանկյունով հավաքմանը:

○ **Կանխարգելիչ գործառնություն.** այս դեպքում մշտադիտարկման արդյունքները հնարավորություն են տալիս առանց ընդհատումների ներգործելու այն պետական ու հասարակական մարմինների վրա, որոնք պատասխանատու են հանրային շահերի և մարդու իրավունքների խախտումների համար, և «մշտադիտարկում» (մոնիտորինգ) եզրույթը փոխարինվում է «վերահսկողություն» հասկացությամբ:

Ըստ էության, հասարակական բնապահպանական մշտադիտարկումը պետք է ծառայի որպես օբյեկտիվ բազա ոլորտի սոցիալական իրականության շտկման համար և ոչ թե միայն նրա նկարագրության կամ ախտորոշման համար:

Ո՞վ կարող է իրականացնել հասարակական բնապահպանական մրշտադիտարկում և վերահսկողություն:

Ցանկացած անհատ, քաղաքացիների խումբ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը տիրապետում է մշտադիտարկում անցկացնելու մեթոդաբանությանը:

Հասարակական բնապահպանական վերահսկողության գործառնությունները

Տեղեկատվական գործառնույթ. արտահայտվում է անհրաժեշտ տեղեկատվության հավաքմամբ, վերլուծմամբ և դրա գործնական կիրառմամբ:

Կանխարգելիչ գործառնույթ. ուղղված է դեռևս չսկսված այն գործունեության կանխարգելմանը, որը խիստ բացասական ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա: Կանխարգելիչ վերահսկողության ամենատարածված ձևերն են՝ հասարակական էկոլոգիական փորձաքննությունը, մասնակցությունը ՇՄԱԳ նախագծերի քննարկմանը և հանրաքվեին:

Պատժիչ գործառնույթ. ուղղված է բնապահպանական օրենսդրությունը խախտողներին իրավաբանական պատասխանատվության ենթարկե-

լուն: Այն իր մեջ ներառում է վարչական, արտադատական և դատական պատասխանատվություններ:

Հասարակական բնապահպանական վերահսկողության ուղղվածությունը

Ըստ ուղղվածության՝ վերահսկողությունը կարող է լինել՝

- ❖ բնական օբյեկտների առանձին տեսակների վիճակի վերահսկողություն,
- ❖ տնտեսական գործունեության առանձին տեսակների վերահսկողություն,
- ❖ ընդհանուր բնույթի ընթացակարգերի վերահսկողություն:

Հասարակական բնապահպանական վերահսկողության մեխանիզմները

1. Մասնակցություն հանրային լսումների ՇՄԱԳ նախագծի փաստաթղթերի փաթեթի մշակման գործընթացին,
2. հասարակական բնապահպանական փորձաքննության իրականացում,
3. հասարակության ներկայացուցիչների ուղղորդում պետական փորձաքննության գործընթացին մասնակցելու համար,
4. որոշակի բնապահպանական խնդրի վերաբերյալ հանրային կարծիքի ձևավորում,
5. բնապահպանական հարցերով հանրաքվեի անցկացում:

4.4. Արդարադատության մատչելիությունը հանրության բնապահպանական շահերի և իրավունքների խախտման դեպքում

Արդարադատության մատչելիություն, ըստ Օրինսի համաձայնագրի, նշանակում է, որ հասարակայնությունը կարող է դիմել դատարան կամ այլ անկախ մարմնի՝ Համաձայնագրի հնարավոր խախտման դեպքերի քննարկման նպատակով:

Օրինսի համաձայնագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ, ով կարծում է, որ տեղեկատվության ազատության վերաբերյալ իր հարցումը չի քննարկվել, անօրինական կերպով մերժվել է մասամբ կամ ամբողջությամբ, չի բավարարվել պատշաճ կերպով, կամ այդ հարցման նկատմամբ ցուցաբերվել է այնպիսի մոտեցում, որը չի համապատասխանում նշված

դրույթներին, ապա իրավունք ունի դիմելու դատարան կամ մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնի, որը հիմնադրվել է օրենքին համապատասխան:

Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երեք իրավիճակ, երբ նպատակահարմար է բողոք ներկայացնել.

1. տեղեկատվության մատչելիության իրավունքի խախտում,
2. հասարակայնության մասնակցության իրավունքի խախտում,
3. խախտվել են շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

Մարդիկ, որպես կանոն, արդարադատության մատչելիությունը նույնացնում են դատարանների և լսումների հետ: Սակայն գոյություն ունեն ընդունված որոշումը բողոքարկելու նաև այլ հնարավորություններ:

Գատարան դիմելը կարող է պահանջել բավական շատ ժամանակ և հաճախ նաև՝ նշանակալի ծախսեր: Առավել արագ և պարզ միջոց է վիճարկվող ոչ ճիշտ որոշման, գործողության կամ անգործության բողոքարկումը արտադատական կարգով:

Գոյություն ունի դա անելու երեք հիմնական միջոց, չնայած դրանց արդյունավետությունը, ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, կարող է լինել տարբեր.

1. ընդունված որոշման, գործողության կամ անգործության բողոքարկումը վերադաս վարչական մարմնին,

2. ընդունված որոշման բողոքարկումը մարդու իրավունքների պաշտպանին (օմբուդսմեն),

3. բողոքարկումը դատախազություն:

Որո՞նք են արտադատական ընթացակարգերի առավելությունները.

- ✓ նշված մարմիններին դիմելը ժամանակի մեծ ծախս չի պահանջում,
- ✓ չի առաջացնում դրամական ծախսերի անհրաժեշտություն,
- ✓ ի տարբերություն հայցով դատարան դիմելուն՝ կարիք չկա դիմելու իրավաբանական ծավալուն հիմնավորումների և հղումներ կատարելու խախտված օրենքների դրույթներին:

Նշված մարմիններին դիմում ներկայացնելու լավագույն միջոցը պատվիրված նամակն է, որը բողոք ներկայացնելու փաստը հաստատող գրավոր ապացույց կլինի:

Արտադատական ընթացակարգերից առավել արդյունավետ միջոց է դատախազությանը դիմելը:

Մարդու՝ շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող իրավունքների և ազատությունների խախտման դեպքերի արձանագրման պարագայում քաղաքացին իրավունք ունի դիմելու դատախազությանը կամ քննչական մար-

միմեներին: Քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը կամ քննչական մարմինները պարտավոր են իրենց իրավասությունների շրջանակներում հարուցել քրեական գործ, ինչի մասին կայացվում է համապատասխան որոշում:

Դատախազն իրավասու է ուսումնասիրելու հասարակայնության այն դիմումները, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին առնչվող հանցագործություններին:

Դատախազությունն դիմում ներկայացնելու լավագույն միջոցը պատվիրված նամակն է: Դատախազության կողմից քաղաքացիների դիմումները քննելու և խնդիրը լուծելու համար սահմանված է ժամկետ՝ առավելագույնը 10 օր տևողությամբ: Ժամկետը հաշվառվում է՝ սկսած նամակը դատախազի ստանալու պահից:

Դատախազությունն ունի հիերարխիկ կառուցվածք, այդ պատճառով ցանկալի է սկզբում դիմել դատախազության տվյալ տարածքի բաժանմունք, որից հետո անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել նաև գլխավոր դատախազություն: Գործի քննության ընթացքի օրինականության վերահսկողությունը կատարում է դատախազը:

Դատախազը պարտավոր է ձեռնարկել օրենքի խախտման ցանկացած հնարավորության կանխմանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները: Վերջապես, դատախազը պարտավոր է կատարել քայլեր՝ ուղղված անձի անվտանգության ապահովմանը, եթե նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում:

Դատարան դիմելու կարգը և առավելությունները

Հակառակ ընդունված կարծիքի՝ դատարանում գործ հարուցելը միշտ չէ, որ դառնում է բարդ, տևական և անհույս գործընթաց: Տեղեկատվության մատչելիության կամ հասարակական մասնակցության պահանջների խախտման հետ կապված վարչական հարցերին վերաբերող գործերը ուղղակի խախտումներին վերաբերող գործեր են:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ունի հատուկ դրույթներ վարչական հարաբերությունների հիման վրա ծագած գործի պարզեցված քննության մասին: Այս դեպքում որոշում ընդունելու համար սահմանված ժամկետները կլինեն ավելի կարճ, իսկ ծախսերը՝ ավելի քիչ:

Առաջնահերթ պահանջ է նախապես սպառել իրավունքի պաշտպանության բոլոր վարչական միջոցները, որից հետո նոր դիմել դատարան:

Նախ՝ անհրաժեշտ է դատական հայց ներկայացնել Վարչական դա-

տարան, որից հետո, հայցը մերժելու դեպքում, որոշումը կարելի է բողոքարկել Վճռաբեկ դատարանում:

Հայցադիմումը կազմելու պահից ի վեր դուք կամ ձեր ներկայացուցիչը կարող եք այն ներկայացնել դատարան: Դատական ծախսերը հոգալուց բացի, կան նաև փաստաթղթերի ներկայացման այլ պահանջներ:

Հայցին կից պարտադիր պետք է ներկայացնել ապացույցներ այն մասին, որ դուք նախապես դիմել եք ձեր բնապահպանական իրավունքները խախտած վերադաս վարչական մարմնին և ստացել բացասական պատասխան: Դատարան դիմելու մասին տեղեկացրել եք այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որին պատրաստվում եք դատի տալ:

5. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ Ն Ե Ր

5.1. ՀՀ-ՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

<p>ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ <i>Նախագահ` Հովիկ Աբրահամյան</i></p>	<p>Հասցե` ք. Երևան 0095, Մարշալ Բաղդամյան, 19 Հեռ.` /374 10/ 58-82-25 Կայքի հասցե` www.parliament.am</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողով <i>Հանձնաժողովի նախագահ` Մարտուն Գրիգորյան</i> ----- <i>Հանձնաժողովի փորձագետ` Հերմինե Պողոսյան</i></p>	<p>Հեռ.` /374 10/ 51-36-56 Էլ.փոստ` agriculture@parliament.am ----- Հեռ.` /374 10/ 51-33-42, /374 91/ 46-80-72 Էլ. փոստ` hermine@parliament.am</p>
<p>ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ <i>Տարածքային զարգացման և բնապահպանական վարչություն</i> <i>Վարչության պետ` Կարեն Մարգարյան</i> ----- ՀՀ Կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն <i>Վարչության պետ` Սուսաննա Տոնոյան</i></p>	<p>ԱՇԽԱՏԱԿԱԶՄ Հասցե` ք. Երևան 0010, Հանրապետության իրապարակ, Կառավարական տուն, 1 Հեռ.`/374 10/ 51-58-30 Էլ. փոստ` karen.margaryan@gov.am Կայքի հասցե` www.gov.am ----- Հեռ.` /374 10/ 51-58-40 Էլ. փոստ` susanna.tonoyan@gov.am</p>
<p>ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ <i>Գլխավոր դատախազ` Աղվան Հովսեփյան</i></p>	<p>Հասցե` ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փ., 5 Հեռ.` /374 10/ 51-16-50 Էլ. փոստ` info@genproc.am Կայքի հասցե` www.genproc.am</p>

<p>ՀՀ դապախազության աշխատակազմի հանրային կապերի վարչություն</p> <p>Վարչության պետ՝ Շահեն Տոնոյան</p>	<p>Հեռ.՝ /374 10/ 51-16-29</p>
<p>ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Նախարար՝ Արամ Հարությունյան</p> <p>-----</p> <p>Հասարակայնության հեղ պապերի բաժին</p> <p>Բաժնի պետի ժ/պ՝ Արևիկ Զատիկյան</p> <p>-----</p> <p>Բնապահպանական պեպական պեպություն</p> <p>Տեսչության պետ՝ Արսեն Ավազյան</p> <p>-----</p> <p>«Տեղեկապվական վերլուծական կենկրոն» ՊՈԱԿ</p> <p>ՊՈԱԿ-ի պեպերեն՝ Պազիկ Հովհաննիսյան</p> <p>-----</p> <p>«Բնապահպանական պեպական փորչաքննություն» ՊՈԱԿ</p> <p>ՊՈԱԿ-ի պեպերեն՝ Անդրանիկ Գևորգյան</p> <p>-----</p> <p>«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենկրոն» ՊՈԱԿ</p> <p>ՊՈԱԿ-ի պեպերեն՝ Արթուր Գևորգյան</p>	<p>Հասցե՝ ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3 Հեռ. /37410/ 52-10-99 Էլ. փոստ՝ min_ecology@mnp.am Կայքի հասցե՝ www.mnp.am</p> <p>-----</p> <p>Հեռ.՝ /374 10/ 52-38-35</p> <p>-----</p> <p>Հեռ.՝ /374 10/ 52-37-99</p> <p>-----</p> <p>Հեռ.՝ /374 10/ 51-91-03 Էլ. փոստ՝ iac@mnp.am</p> <p>-----</p> <p>Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի, 29 Հեռ.՝ /374 10/ 22-02-18 Էլ. փոստ՝ mnpexpertise@bk.ru</p> <p>-----</p> <p>Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի, 29 Հեռ.՝ /374 10/ 27-20 07 Էլ. փոստ՝ armekomonitoring@mail.ru Կայքի հասցե՝ www.armmonitoring.am</p>
<p>ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Նախարար՝ Արմեն Գևորգյան</p>	<p>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 2 Հեռ.՝ /374 10/ 51-13-02 Էլ. փոստ՝ mta@mta.gov.am Կայքի հասցե՝ www.mta.gov.am</p>

<p>Հասարակայնության հեղինակության բաժին</p> <p><i>Բաժնի պետ՝ Չոյա Բարսեղյան</i></p> <p>-----</p> <p>Տեղական ինքնակառավարման վարչություն</p> <p><i>Վարչության պետ՝ Աշոտ Գիլոյան</i></p>	<p>Հեռ.՝ /374 10/ 51-13-26 Էլ. փոստ՝ z.barseghyan@mta.gov.am</p> <p>-----</p> <p>Հեռ.՝ /374 10/ 51-13-42 Էլ. փոստ՝ a.giloyan@mta.gov.am</p>
<p>ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p> <p><i>Նախարար՝ Գերեմիկ Գումանյան</i></p> <p>-----</p> <p>ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային վարչություն</p> <p><i>Վարչության պետ՝ Արտավազ Կանյան</i></p>	<p>Հասցե՝ ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3 Հեռ.՝ /374 10/ 58-24-13 Էլ. փոստ՝ minister@moh.am Կայքի հասցե՝ www.moh.am</p> <p>-----</p> <p>Հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Հովսեփյան փ.,10 Հեռ.՝ /374 10/ 65-03-05 Էլ. փոստ՝ ph@ph.am</p>
